Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև 2018թ. ապրիլի 3-ին ստորագրված՝ «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկողության կատարելագործում» ծրագրի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից դրամաշնորհի տրամադրման մասին» համաձայնագրի ռուսերեն ստորագրված տեքստի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՄ. -----

«Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկողության կատարելագործում» ծրագրի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից դրամաշնորհի տրամադրման մասին

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԸ՝ միջազգային կազմակերպություն, որը ստեղծվել է և գործունեություն իրականացնում է Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի Հանրապետության միջև 2006 թվականի հունվարի 12-ին կնքված՝ Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին Համաձայնագրի հիման վրա, որը գտնվում է Ղազախստանի Հանրապետություն, ք. Ալմաթի, 050051, Դոստիկ պողոտա, 220 հասցեում, որը հանդիսանում է Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցների Կառավարիչ և հանդես է գալիս դրա մասնակիցների անունից և հանձնարարությամբ՝ ղեկավարվելով «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրով, «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցների կառավարման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրով և Կայունացման ու զարգացման եվրասիական հիմնադրամի խորհրդի 2018 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ (Արձանագրություն հմ.37), այսուհետ՝ **Կառավարիչ**, և

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, այսուհետ՝ **Ստացող,**

կնքեցին սույն Համաձայնագիրը Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից դրամաշնորհի տրամադրման վերաբերյալ (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1. ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ԵԶՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.1. Համաձայնագրի անբաժանելի մաս են հանդիսանում մասնակից պետությանը Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից դրամաշնորհի տրամադրման վերաբերյալ համաձայնագրերի Ստանդարտ պայմանները (այսուհետ՝ **Ստանդարտ պայմաններ**), (Համաձայնագրի Հավելված հմ. 1)՝ հաստատված Կառավարչի կողմից Հիմնադրամի միջոցների կառավարման 4-րդ հոդվածի 1 (ժ) կետի համաձայն (Եվրասիական զարգացման բանկի Կառավարման արձանագրություն հմ. 54/ԿԶԵՀ առ 14-ը սեպտեմբերի 2017 թվականի), որը հանդիսանում է Հիմնադրամի պաշտոնական փաստաթուղթը, համաձայն Հիմնադրամի մասին Կանոնակարգի 2-րդ հոդվածի:

1.2. Համաձայնագրում օգտագործվող եզրույթները և սահմանումները ունեն նույն նշանակությունը, որն ունեն Ստանդարտ պայմաններում:

Ի փոփոխումն կամ ի լրումն Ստանդարտ պայմանների օգտագործվող որոշ եզրույթների իմաստը որոշվում է Համաձայնագրի համատեքստում:

ՀՈԴՎԱԾ 2. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

2.1. Կառավարիչն Ստացողին Հիմնադրամի մասնակիցների անունից և հանձնարարությամբ Հիմնադրամի միջոցներից տրամադրում է դրամաշնորհ 1.000.000,00 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլարի չափով, Համաձայնագրով սահմանված կարգով և պայմաններով, «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ

հիվանդությունների կանխարգելման և վերահսկողության կատարելագործում» ծրագրի ֆինանսավորման համար, որը նկարագրված է Համաձայնագրի հմ. 4 Հավելվածում:

2.2. Դրամաշնորհը տրամադրվում է Ստացողին միջոցների տրամադրման Հայտերի հիման վրա՝ համաձայն Ստանդարտ պայմանների 2.01-ին և 2.05-րդ բաժինների, Կառավարչի կողմից միջոցների տրամադրման Հայտում Ստացողի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով, Կառավարչի կողմից սահմանված միջոցների ծախսման ընթացակարգերի համաձայն, որոնք նշված են Համաձայնագրի հմ. 7 Հավելվածում:

Դրամաշնորհի նպատակների համար Ստացողը բացում և վարում է դրամաշնորհի արժույթով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության Միասնական գանձապետական հաշվի առանձին հաշիվ Կառավարչի համար բավարար պայմաններով, ներառյալ հաշվի պատշաճ պաշտպանության երաշխավորությունը հայցերից, բռնագրավումներից, կալանքներից կամ ոչ նպատակային օգտագործումից (այսուհետ՝ **Հատուկ հաշվեհամար**):

Դրամաշնորհի միջոցների հաշվեգրումը Հատուկ հաշվեհամարին և դրանց ծախսումը Հատուկ հաշվեհամարից իրականացվում են Կառավարչի կողմից սահմանված միջոցների տրամադրման ընթացակարգերի համաձայն՝ նշված Համաձայնագրի հմ. 7 Հավելվածում:

2.3. Դրամաշնորհի միջոցները տրամադրվում են Ստացողին Համաձայնագրի հմ. 3 Հավելվածի և Ստանդարտ պայմանների 2.02-րդ և 2.04-րդ բաժինների դրույթների համաձայն՝ Ստացողի կողմից Ընդունելի ծախսերի վճարման համար, Ծրագրի իրականացման շրջանակներում Ստացողի կողմից Համաձայնագրի Հավելված հմ. 6-ի պահանջներին համապատասխան կնքված մատուցման պայմանագրերով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների հիմնավորված գնի վճարման համար, որոնք ենթակա են ֆինանսավորման Դրամաշնորհի միջոցների հաշվին:

2.4. Չի թույլատրվում դրամաշնորհի միջոցների օգտագործումը Ստանդարտ պայմանների 2.03-րդ բաժնում նշված Հարկերի ֆինանսավորման և վճարման նպատակով:

2.5. Դրամաշնորհի համապատասխան մասի տրամադրման ամսաթիվ է համարվում Համաձայնագրի 8-րդ հոդվածում նշված՝ Կառավարչի թղթակցային հաշվից դրամական միջոցների դուրս գրման օրը:

2.6. Դրամաշնորհն Ստացողին տրամադրվում է մինչև դրամաշնորհի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթիվը, որը նշված կամ սահմանված է Համաձայնարի հմ. 2 Հավելվածով և Ստանդարտ պայմանների 1.03-րդ բաժնի «զ» կետում:

ՀՈԴՎԱԾ 3. ՍՏԱՑՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ստացողը պարտավորվում է ապահովել.

ա) Ծրագրի իրականացումը՝ Համաձայնագրով և Ստանդարտ պայմանների 3.01-ին բաժնի պահանջներով սահմանված կարգով և պայմաններով, Համաձայնագրի հմ. 4 Հավելվածում նկարագրված՝ Ծրագրի իրականացման Ծրագրին համապատասխան:

բ) Ծրագրի իրականացման ընթացքում Ստացողի կողմից Համաձայնագրի հմ. 2 Հավելվածում նշված քաղաքականության և ընթացակարգերի պահանջների կատարում, հաշվետվությունների և փաստաթղթերի կազմում և տրամադրում Կառավարչին՝ նշված քաղաքականության և ընթացակարգերի համաձայն:

գ) Ծրագրի համաֆինանսավորումը՝ համաձայն Համաձայնագրի հմ. 3 Հավելվածի և տեխնիկական միջոցների, ծառայությունների և այլ ռեսուրսների

տրամադրումը, որոնք անհրաժեշտ են Ծրագրի արդյունավետ կատարման ապահովման համար՝ Ստանդարտ պայմանների 3.01-ին բաժնի «բ» կետին համապատասխան:

դ) Կառավարչին Ծրագրի փաստաթղթերի և դրանց համար հասանելիության տրամադրումը, հաշվառման փաստաթղթերի վարումը և պահպանումը՝ Ստանդարտ պայմանների 3.02-րդ բաժնին համապատասխան:

ե) Ծրագրի մշտադիտարկումը և գնահատումը, ինչպես նաև Համաձայնագրով նախատեսված՝ Ծրագրի իրականացման ընթացքի մասին հաշվետվության տրամադրումը՝ Ստանդարտ պայմանների 3.03-րդ բաժնի և Համաձայնագրի հմ. 5 Հավելվածի համաձայն:

զ) Դրամաշնորհի միջոցների ֆինանսական կառավարումը, ֆինանսական հաշվետվության աուդիտի անցկացումը և Կառավարչին տեղեկատվության տրամադրումը՝ Ստանդարտ պայմանների 3.04-րդ բաժնի պահանջներին համապատասխան:

Հաշվետվությունները, փաստաթղթերը և աուդիտորների եզրակացությունները, որոնք նշված են Ստանդարտ պայմանների 3.04-րդ բաժնի «գ» կետում, Կառավարչին են տրամադրվում պատրաստ լինելուն պես, սակայն ցանկացած դեպքում ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային տարվա ավարտից 6 (վեց) օրացուցային ամիս հետո՝ Ծրագրի իրականացման ժամկետի ընթացքում: Առաջին փաստաթղթերը (հաշվետվությունները, փաստաթղթերը և աուդիտորների եզրակացությունները, որոնք նշված են Ստանդարտ պայմանների 3.04-րդ բաժնի «գ» կետում), պետք է տրամադրվեն Կառավարչին ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային տարվա ավարտից 6 (վեց) օրացուցային ամիս հետո, որի ընթացքում Համաձայնագրով նախատեսված Կառավարչի պարտականությունները մտել են ուժի մեջ, իսկ վերջիններս՝ ոչ ուշ, քան դրամաշնորհի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթվից 6 (վեց) օրացույցային ամիս հետո: Նշված փաստաթղթերի՝ որևէ կոնկրետ ժամանակահատվածի համար ներկայացման այլ կարգը և ժամկետը կարող են համաձայնեցվել Կառավարչի կողմից՝ Ստացողի գրավոր հիմնավորված դիմումի հիման վրա, որն Ստացողն ուղարկել է Կառավարչին ոչ ուշ, քան դրանց ներկայացման ժամկետը լրանալուց **2** ամիս առաջ՝ Ստացողին Կառավարչի կողմից համապատասխան ծանուցում ուղարկվելու միջոցով՝ Ստանդարտ պայմանների 8.01-ին բաժնին համապատասխան:

է) Ծրագրի իրականացման համար Դրամաշնորհի միջոցներից անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների իրականացումը՝ Համաձայնագրի հմ. 6 Հավելվածում նկարագրված գնումների ընթացակարգերին համապատասխան:

ը) Ծրագրի ֆինանսավորման համար տրամադրված միջոցների ծախսում՝ Համաձայնագրի հմ. 7 Հավելվածում սահմանված միջոցների ծախսման ընթացակարգերին համապատասխան:

թ) Ստացողի օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ **«Ծրագրի իրականացման խումբ»** կամ **«ԾԻԽ»**) ներգրավումը Համաձայնագրի հմ. 4 Հավելվածի 4.2-րդ կետում նշված գործառույթների իրականացման համար՝ ապահովելով նշված գործառույթների իրականացումը ԾԻԽ-ի մասնագետների կողմից, որոնց կոմպետենտության մակարդակը թույլ է տալիս, Համաձայնագրի հմ. 2 Հավելվածում նշված քաղաքականությանը և ընթացակարգերին համապատասխան, արդյունավետ իրականացնել Ծրագիրը, ԾԻԽ-ի գործունեությունը իրականացման ողջ ժամանակահատվածի ընթացքում և Ծրագրի մասով ամփոփիչ

հաշվետվությունների ներկայացումը, ինչպես նաև ԾԻԽ-ին վերապահված գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների տրամադրումը:

3.2. Ստացողի և Կառավարչի միջև համագործակցությունն իրականացվում է Ստանդարտ պայմանների 3.05-րդ և 3.06-րդ բաժիններին համապատասխան:

3.3. Ստացողը Կառավարչին գրավոր հայտով ներկայացնում է տեղեկատվություն իր տարածքում ֆինանսական և տնտեսական պայմանների մասին, որը հիմնավորված հարցվում է Կառավարչի կողմից՝ հաշվի առնելով Ստանդարտ պայմանների 4.01 բաժնի պայմանները:

ՀՈԴՎԱԾ 4. ՍՏԱՑՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

4.1. Դրամաշնորհի միջոցների տրամադրման՝ Ստացողի իրավունքների կասեցումը, չեղարկումը, Դրամաշնորհի միջոցների հատուցման պահանջի ներկայացումն իրականացվում են Կառավարչի կողմից՝ Ստանդարտ պայմանների V հոդվածով նախատեսված դեպքերում ու կարգով և դրանում նշված հետևանքներով:

Ստանդարտ պայմանների 5.02-րդ բաժնի «ժ» կետին և 5.03 բաժնի «զ» կետին համապատասխան սահմանվում են նշված հետևանքների կիրառման հետևյալ լրացուցիչ հիմքերը.

Համաձայնագրի 3.1-ին կետի «թ» ենթակետում նշված՝ Ծրագրի իրականացման խմբի գործառույթները և իրավասությունները փոփոխվել են, դադարեցվել են կամ կասեցվել են, կամ Ծրագրի իրականացման խմբի գործունեության վրա կիրառվել է այնպիսի այլ ազդեցություն, որն էականորեն և բացասականորեն անդրադարձել է Ստացողի կարողությունների վրա իրականացնելու Ծրագրի իրագործումը Համաձայնագրով սահմանված պայմանների հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

5.1. Համաձայնագրի վերաբերյալ վեճերը լուծվում են Ստանդարտ պայմանների 6.03-րդ բաժնի համաձայն՝ հաշվի առնելով Կառավարչի հնարավորությունների և իրավունքների մասին ընդհանուր դրույթները Ստացողին՝ Ստանդարտ պայմանների 6.01-ին և 6.02-րդ բաժիններով սահմանված պարտականությունների հարկադիր կատարման մասով, բացառությամբ Ստանդարտ պայմանների 6.01 բաժնի ա) կետի:

ՀՈԴՎԱԾ 6. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Համաձայնագրով Կառավարչի պարտավորություններն ուժի մեջ են մտնում («Ուժի մեջ մտնելու ամսաթիվը») այն օրը, երբ Կառավարիչն Ստացողին ծանուցում է ուղարկում այն մասին, որ ընդունել է իր համար բավարար ապացույցները Ստացողի կողմից հետևյալ պայմանները կատարվելու վերաբերյալ.

ա) Համաձայնագիրն ստորագրված է Ստացողի անունից՝ Ստացողի օրենսդրության համաձայն պատճաշ կերպով ձևակերպված լիազորություն ունեցող անձի կողմից,

բ) Համաձայնագիրն Ստացողի կողմից պատշաճ կերպով հաստատված կամ վավերացված է նրա օրենսդրությամբ սահմանված կարգով,

գ) Ծրագրի իրականացման գործառույթները վերապահված են Ծրագրի իրականացման խմբին՝ Ստացողի օրենսդրության համապատասխան, ինչը նախատեսված է Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3.1-ին կետի «ժ» ենթակետով,

դ) Ստացողն ապահովել է Ծրագրի գնումների պլանի նախապատրաստումը, Կառավարչի հետ համաձայնեցնումը և հաստատումը՝ համաձայն Հիմնադրամի Գնումների քաղաքականության պահանջների (այսուհետ՝ Գնումների պլան),

ե) Ստացողը նախապատրաստել է, Կառավարչի հետ համաձայնեցրել է և հաստատել է Ծրագրի իրականացման ուղեցույցը, որը բավարար կլինի Կառավարչի համար իր ձևով և բովանդակությամբ, պարունակում է Ստացողի լիազորված մարմինների, կազմակերպությունների և կառույցների՝ Ծրագրի իրականացման հարցերով փոխգործակցության ընթացակարգերի նկարագրությունը՝ ներառյալ Ծրագրի վարչական և ֆինանսական կառավարումը, գնումների կառավարումը, հաշվառման վարումը, մշտադիտարկումը և Ծրագրի գնահատումը, Համաձայնագրի նկատմամբ կիրառվող քաղաքականությունների և ընթացակարգերի պահանջների կատարման հսկողությունը, ինչպես նաև հաշվետվությունների ձևաչափերը, որոնց նախապատրաստումը նախատեսված է Համաձայնագրով,

զ) Ստացողը նախապատրաստել է, Կառավարչի հետ համաձայնեցրել է և հաստատել է Ծրագրի իրականացման ուղեցույցի 1.բ մասը, որը բավարար կլինի Կառավարչի համար իր ձևով և բովանդակությամբ, պարունակում է առաջին բժշկական օգնության հաստատությունների ֆինանսավորման ընթացակարգի նկարագրությունը՝ փաստացի իրականացված բժշկական հետազոտությունների տվյալների հիման վրա:

Այն դեպքում, երբ Կառավարչի կողմից ուժի մեջ մտնելու մասին ծանուցման ուղարկումը հետաձգվել է Ստանդարտ պայմանների 7.02-րդ բաժնի «բ» կետի դրույթների համաձայն, Կառավարիչն այդ մասին ծանուցում է Ստացողին՝ նշելով այն իրադարձությունները, որոնք խոչընդոտ են հադիսացել Համաձայնագրի ուժի մեջ մտնելուն:

6.2. Որպես Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պայմանների կատարման հաստատում՝ Կառավարչին պետք է տրամադրվեն Ստացողի արդարադատության նախարարության եզրակացությունը (իրավաբական եզրակացությունը), որը հաստատում է, որ ստորագրված Համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատված կամ վավերացված է Ստացողի կողմից և իր համար հանդիսանում է իրավաբանորեն պարտադիր՝ համաձայն սույն Համաձայնագրի պայմանների, միջազգային իրավունքի նորմերի և Ստացողի ներպետական օրենսդրության, ինչպես նաև եզրակացություն՝ Ստացողի կողմից սույն հոդվածի 6.1-ին կետում նշված՝ ուժի մեջ մտնելու այլ պայմանների կատարման վերաբերյալ:

6.3. Համաձայնագրի ուժի մեջ մտնելու բոլոր նախատեսված պայմանները, ներառյալ Կառավարչի կողմից իրավաբանական եզրակացության ստացումը, Ստացողի կողմից իրականացվում են Կողմերի կողմից Համաձայնագրի ստորագրման ամսաթվից ոչ ուշ, քան 180 (հարյուր ութսուն) օրվա ընթացքում (**«Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը»**): Սույն ժամկետի խախտումը հանգեցնում է Ստանդարտ պայմանների 7.03-րդ բաժնով նախատեսված հետևանքներին:

6.4. Համաձայնագրի գործողությունը և Համաձայնագրով նախատեսված Կողմերի բոլոր պարտավորությունները դադարեցվում են Ստանդարտ պայմանների 7.04-րդ բաժնի դրույթներին համաձայն:

ՀՈԴՎԱԾ 7. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Համաձայնագրի հետ կապված ծանուցումների և հարցումների ուղարկումն իրականացվում է Ստանդարտ պայմանների 8.01-ին բաժնի դրույթներին համաձայն:

Ստանդարտ պայմանների 8.01-ին բաժնի նպատակների համար նշվում են Կողմերի հետևյալ հասցեները.

Կառավարիչ՝	Ստացող՝
Եվրասիական զարգացման բանկ Ղազախստանի Հանրապետություն, Ք. Ալմաթի, 050051, Դոստիկ պող., 220	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն Հայաստանի Հանրապետություն Ք. Երևան, Մելիք-Ադամյան փող., շ. 1

7.2. Համաձայն Ստանդարտ պայմանների 8.02-րդ բաժնի «ա» կետի՝ Համաձայնագրի նպատակների համար Ստացողի իրավասու ներկայացուցիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը և Ստանդարտ պայմանների 8.02-րդ բաժնի համաձայն՝ նրա կողմից լիազորված անձը (անձինք):

Ստացողի անունից Ստանդարտ պայմանների 8.02-րդ բաժնի «բ» կետով նախատեսված գործողությունների կատարման համար իրավասությունները ձևակերպվում են Ստացողի կողմից՝ առանձին գրավոր փաստաթղթերով, Ստացողի օրենսդրության համաձայն:

Իրավասությունների հաստատումը Ստացողի կողմից ներկայացվում է Կառավարչին՝ Ստանդարտ պայմանների 8.03-րդ բաժնի համաձայն:

7.3. Համաձայնագրին կից փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են և ուժի մեջ են մտնում Ստանդարտ պայմանների 8.04-րդ բաժնով նախատեսված կարգով:

7.4. Համաձայնագրի բոլոր հավելվածները դրա անբաժանելի մասն են և կազմված են.

1) Հավելված հմ.1 – Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից մասնակից պետությանը Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի Ստանդարտ պայմաններ

2) Հավելված հմ. 2 - Դրամաշնորհի պայմաններ

3) Հավելված հմ.3 - Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը և ծախսերի տեսակները

4) Հավելված հմ. 4 - Ծրագրի իրականացման նկարագրություն և կարգ

5) Հավելված հմ. 5 - Ծրագրի մշտադիտարկում և գնահատում

6) Հավելված հմ. 6 - Գնումների ընթացակարգեր

7) Հավելված հմ. 7 - Միջոցների տրամադրման ընթացակարգեր

ՀՈԴՎԱԾ 8. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կառավարչի կողմից Հիմնադրամի միջոցներով գործարքների իրականացման համար բացված հաշվի վավերապայմաններ՝

Eurasian Development Bank
(Eurasian Fund for Stabilization and Development)
Almaty, Kazakhstan, SWIFT: EABRKZKAACF
Correspondent account №890-1003-441
with The Bank of New York Mellon, New York, USA
SWIFT: IRVTUS3N
Payment details: In favor of account № KZ147000000221100001of
Eurasian Fund for Stabilization and Development

Համաձայնագիրը ստորագրված է Երևան քաղաքում 2018 թվականի ապրիլի 3-ին, ռուսերեն, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, մեկական օրինակ Կառավարչի և Ստացողի համար:

Կառավարիչ՝	**Ստացող՝**
_____	_____
Ա. Յու. Բելյանինով	Վ. Ս. Արամյան
Եվրասիական զարգացման բանկի կողմից	Հայաստանի Հանրապետության կողմից

Հավելված հմ. 1
«Առողջապահության առաջնային օղակում
ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման
և վերահսկողության կատարելագործում»
ծրագրի ֆինանսավորման համար
ԿՀԵՀ միջոցներից դրամաշնորհի տրամադրման մասին»
2018 թվականի ապրիլի 3-ի Համաձայնագրի

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է
Եվրասիական զարգացման բանկի
Կառավարման կողմից
(2017 թ. սեպտեմբերի 14-ի թիվ 54-ԿՀԵՀ արձանագրություն)

ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հավելված հմ. 1
Եվրասիական զարգացման բանկի
Կառավարման՝ 2017 թ. սեպտեմբերի 14-ի նիստի
թիվ 54-ԿԶԵՀ արձանագրության

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է
Եվրասիական զարգացման բանկի
Կառավարման կողմից
(2017 թ. սեպտեմբերի 14-ի թիվ 54- ԿԶԵՀ արձանագրություն)

ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բովանդակություն

ՀՈԴՎԱԾ 1. Ընդհանուր դրույթներ
ԲԱԺԻՆ 1.01. Ստանդարտ պայմանների կարգավիճակը
ԲԱԺԻՆ 1.02. Ստանդարտ պայմանների կիրառումը
ԲԱԺԻՆ 1.03. Եզրույթներ և սահմանումներ
ԲԱԺԻՆ 1.04. Հղումներ և վերնագրեր

ՀՈԴՎԱԾ II. Դրամաշնորհի միջոցների տրամադրումը
ԲԱԺԻՆ 2.01.Դրամաշնորհի միջոցների տրամադրումը: Միջոցների տրամադրման հայտեր
ԲԱԺԻՆ 2.02. Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի ընդունելի ծախսերը
ԲԱԺԻՆ 2.03. Հարկեր
ԲԱԺԻՆ 2.04. Դրամաշնորհի միջոցների վերաբաշխումը ծախսերի տեսակների միջև
ԲԱԺԻՆ 2.05. Դրամաշնորհի միջոցների տրամադրման արժույթը
ԲԱԺԻՆ 2.06. Հաշվառման վարում
ԲԱԺԻՆ 2.07. Արժույթների արժեքի գնահատում

ՀՈԴՎԱԾ III. Ծրագրի իրականացումը
ԲԱԺԻՆ 3.01. Ծրագրի իրականացումը
ԲԱԺԻՆ 3.02. Պլաններ, փաստաթղթեր, հաշվառում
ԲԱԺԻՆ 3.03. Ծրագրի մշտադիտարկում և գնահատում
ԲԱԺԻՆ 3.04. Ֆինանսական կառավարում: Ֆինանսական հաշվետվություն: Աուդիտ
ԲԱԺԻՆ 3.05. Կառավարչի և Ստացողի միջև փոխգործակցությունը
ԲԱԺԻՆ 3.06. Ծրագրի վերահսկումը Ստացողի տարածքում

ՀՈԴՎԱԾ IV. Տեղեկատվության տրամադրումը
ԲԱԺԻՆ 4.01. Ֆինանսական և տնտեսական տվյալներ

ՀՈԴՎԱԾ V. Չեղարկումը: Կասեցումը: Փոխհատուցումը:
ԲԱԺԻՆ 5.01. Ստացողի կողմից Դրամաշնորհի գումարների չեղարկումը
ԲԱԺԻՆ5.02.Դրամաշնորհի միջոցների տրամադրման վերաբերյալ Ստացողի իրավունքի կասեցումը
ԲԱԺԻՆ 5.03. Դրամաշնորհի միջոցների տրամադրման վերաբերյալ Ստացողի իրավունքի չեղարկումը
ԲԱԺԻՆ 5.04. Փոխհատուցում
ԲԱԺԻՆ 5.05. Դրամաշնորհի մասին Համաձայնագրերի գործողությունը չեղարկումից, կասեցումից կամ փոխհատուցման պահանջ ներկայացնելուց հետո

ՀՈԴՎԱԾ VI. Պարտավորությունների հարկադիր կատարում: Արբիտրաժ
ԲԱԺԻՆ 6.01. Պարտավորությունների հարկադիր կատարման հնարավորություն
ԲԱԺԻՆ 6.02. Իրավունքների իրականացման հետաձգում
ԲԱԺԻՆ 6.03. Արբիտրաժ

ՀՈԴՎԱԾ VII. Ուժի մեջ մտնելը: Գործողության դադարեցումը
ԲԱԺԻՆ 7.01. Կառավարչի պարտականությունների ուժի մեջ մտնելու պայմանները՝ համաձայն Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի
ԲԱԺԻՆ 7.02. Կառավարչի պարավորությունների ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ համաձայն Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի

ԲԱԺԻՆ 7.03. Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի գործողության դադարեցումն ուժի մեջ չմտնելու պատճառով
ԲԱԺԻՆ 7.04. Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի գործողության դադարեցումը

ՀՈԴՎԱԾ VIII. Այլ դրույթներ
ԲԱԺԻՆ 8.01. Ծանուցումներ և հարցումներ
ԲԱԺԻՆ 8.02. Գործողություններ Ստացողի անունից
ԲԱԺԻՆ 8.03. Ստացողի նեկայացուցչի իրավասությունների հաստատում
ԲԱԺԻՆ 8.04. Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի ձևակերպումը

ՀՈԴՎԱԾ I. Ընդհանուր դրույթներ

ԲԱԺԻՆ 1.01. *Ստանդարտ պայմանների կարգավիճակը*

Սույն «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից մասնակից պետությանը Դրամաշնորհի տրամադրման մասին համաձայնագրերի ստանդարտ պայմանները» (այսուհետ՝ Ստանդարտ պայմաններ) հաստատված են Կառավարչի կողմից՝ Հիմնադրամի միջոցների կառավարման մասին Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի «ժ» ենթակետի համաձայն, և հանդիսանում են Հիմնադրամի պաշտոնական փաստաթուղթ՝ Հիմնադրամի մասին Կանոնակարգի 2-րդ հոդվածի համաձայն:

ԲԱԺԻՆ 1.02. *Ստանդարտ պայմանների կիրառումը*

Սույն Ստանդարտ պայմանները կիրառվում են կոնկրետ Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի նկատմամբ՝ այն ծավալով, որը նախատեսված է սույն Համաձայնագրով: Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրում կարգավորիչ դրույթների բացակայության դեպքում գործում են Ստանդարտ պայմանների կիրառելի դրույթները՝ այն մասով, որոնք չեն հակասում տվյալ համաձայնագրին:

Եթե Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի կամ դրան կից հավելվածների որևէ դրույթ չի համապատասխանում Ստանդարտ պայմանների որևէ դրույթին, կիրառվում են Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի կամ համապատասխան հավելվածի դրույթները:

ԲԱԺԻՆ 1.03. *Եզրույթներ և Սահմանումներ*

Եթե Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, ապա Ստանդարտ պայմաններում և Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրում կիրառվող եզրույթները և սահմանումները նշանակում են հետևյալը.

ա) **Ակտիվներ** – ցանկացած գույք, ֆինանսական միջոց, եկամուտներ և պահանջի իրավունքներ:

բ) **Դրամաշնորհի արժույթ** – արժույթ (ԱՄՆ դոլար և/կամ եվրո), որով արտահայտված է Դրամաշնորհը նշված Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրում: Եթե Դրամաշնորհն արտահայտված է մեկից ավելի արժույթով, ապա Դրամաշնորհի արժույթ եզրույթը վերաբերում է յուրաքանչյուր արժույթին:

գ) **Արտաքին պարտք** – Ստացողի ցանկացած պարտք, որը ենթակա է կամ կարող է ենթակա լինել վճարման ցանկացած արժույթով ցանկացած այլ պետության կամ ՄՖԿ-ին:

դ) **Դրամաշնորհ** – Հիմնադրամի միջոցներ, որոնք անհատույց և անվերադարձ հիմունքներով տրամադրվում են Ստացողին այսպիսի Դրամաշնորհի մասին Համաձայնագրով սահմանված՝ Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի պայմանների և կարգերի հիման վրա՝ Ծրագրի ֆինանսավորման համար:

ե) **Ուժի մեջ մտնելու ամսաթիվ** – Ստանդարտ պայմանների **7.02-րդ բաժնի «ա» կետին** համապատասխան սահմանված ամսաթիվ, որի սկսվելուն պես Կառավարչի պարտավորությունները՝ համաձայն Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի, մտնում են ուժի մեջ:

զ) **Դրամաշնորհի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթիվ** - Դրամաշնորհի մասին Համաձայնագրում նշված ամսաթիվ կամ այլ ավելի ուշ ամսաթիվ, որը Կառավարիչը կարող է սահմանել Ստացողի դիմումի կամ Հիմնադրամի Խորհրդի

որոշման հիման վրա՝ Ստացողին ուղարկելով համապատասխան ծանուցում՝ համաձայն Ստանդարտ պայմանների **8.01-ին բաժնի և 8.04-րդ բաժնի «գ» կետի**, որի սկսվելուց հետո Դրամաշնորհի միջոցներ ստանալու Ստացողի իրավունքը դադարեցվում է:

է) **Հիմնադրամի հիմնադրման մասին պայմանագիր** - Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին պայմանագիր՝ ստորագրված 2009 թ. հունիսի 9-ին, ք. Մոսկվայում՝ Հիմնադրամի հիմնադիր պետությունների՝ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության կողմից:

ը) **ՄՖԿ** - Միջազգային ֆինանսական կազմակերպություններ, որոնք ստեղծվել են միջազգային իրավունքին համապատասխան՝ միջպետական կամ միջկառավարական համաձայնագրերի հիման վրա, և ունեն միջազգային իրավասուբյեկտություն:

թ) **Հիմնադրամի մասին կանոնակարգ** - Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի մասին կանոնակարգ, որը հանդիսանում է Հիմնադրամի հիմնադրման մասին Պայմանագրի անբաժանելի մասը:

ժ) **Ստացող** - Հիմնադրամի մասնակից պետություն, որը հանդիսանում է Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի կողմ, որին տրամադրվում է Դրամաշնորհը:

ժա) **Ծրագիր** – Որոշակի ժամկետի ընթացքում իրականացվող՝ փոխկապակցված միջոցառումների համալիր, որոնց ֆինանսավորման համար տրամադրվում է Դրամաշնորհը:

ժբ) **Հիմնադրամի միջոցների կառավարման մասին համաձայնագիր** - Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցների կառավարման մասին Համաձայնագիր՝ ստորագրված Կառավարչի և Հիմնադրամի հիմնադիրների/մասնակիցների միջև, համաձայն Հիմնադրամի հիմնադրման մասին պայմանագրի և Հիմնադրամի մասին կանոնակարգի:

ժգ) **Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին համաձայնագիր** – Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի Հանրապետության միջև 2006 թ. հունվարի 12-ին ք. Աստանայում ստորագրված՝ Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին Համաձայնագիր:

ժդ) **Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագիր** - Հիմնադրամի մասնակիցների անունից և հանձնարարությամբ գործող Կառավարչի և Ստացողի միջև Համաձայնագիր, որի առարկան Հիմնադրամի միջոցներից Դրամաշնորհի տրամադրումն է: Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագիրը ներառում է բոլոր ուղղումները (փոփոխությունները և լրացումները), որոնք ներառվել են ըստ սահմանված կարգի, ինչպես նաև դրան կից բոլոր հավելվածները և փաստաթղթերը, որոնց հղումները ներառված են նման Դրամաշնորհի մասին Համաձայնագրի տեքստում:

ժե) **Հիմնադրամի մասնակիցներ** - Հիմադրամի հիմնադրման մասին պայմանագրի և Հիմնադրամի մասին կանոնակարգի համաձայն՝ Հիմնադրամի մասնակից պետություններ և կազմակերպություններ:

ժզ) **Կառավարիչ** – Եվրասիական զարգացման բանկ՝ հանդիսանալով Միջազգային կազմակերպություն, ստեղծված Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին համաձայնագրի համաձայն, գործող որպես Հիմնադրամի միջոցների Կառավարիչ՝ համաձայն Հիմնադրամի միջոցների կառավարման մասին Համաձայնագրի, կամ Հիմնադրամի մասնակիցների կողմից որոշված այլ կազմակերպություն՝ Հիմնադրամի հիմնադրման մասին պայմանագրի և Հիմնադրամի մասին կանոնակարգի համաձայն:

ժէ) **Հիմնադրամ** – Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամ՝ ստեղծված Հիմնադրամի հիմնադրման մասին Պայմանագրի հիման վրա՝ որպես Հիմնադրամի հիմնադրման մասին Պայմանագրով սահմանված նպատակներով ֆինանսական ռեսուրսների ներգրավման, կուտակման և օգտագործման գործիք:

Ստանդարտ պայմաններում օգտագործվող բոլոր այլ եզրույթները և սահմանումներն ունեն նույն նշանակությունը, ինչը որ սահմանված է Հիմնադրամի հիմնադրման մասին Պայմանագրում, Հիմնադրամի մասին Կանոնակարգում և Հիմնադրամի Խորհրդի կողմից հաստատված՝ Հիմնադրամի միջոցներից դրամաշնորհների տրամադրման Կարգում:

Որոշ եզրույթների նշանակությունը սահմանվում է Ստանդարտ պայմանների համատեքստում:

ԲԱԺԻՆ 1.04. *Հղումներ և վերնագրեր*

Ստանդարտ պայմաններում առկա հղումները հոդվածներին, բաժիններին և կետերին հանդիսանում են Ստանդարտ պայմանների հղումները հոդվածներին, բաժիններին և կետերին: Հոդվածների և բաժինների վերնագրերը, ինչպես նաև բովանդակությունը ներառված են Ստանդարտ պայմաններում՝ տեղեկատվական նպատակներով, և հաշվի չեն առնվում Ստանդարտ պայմանների մեկնաբանման դեպքում:

ՀՈԴՎԱԾ II. Դրամաշնորհի միջոցների տրամադրումը

ԲԱԺԻՆ 2.01. *Դրամաշնորհի միջոցների տրամադրումը*

Միջոցների տրամադրման հայտերը

ա) Դրամաշնորհի միջոցների տրամադրումը կատարվում է Կառավարչի կողմից՝ Ստացողի հարցման հիման վրա, ներկայացված Ստացողի կողմից Կառավարչին, որը պարունակում է հետևյալ փաստաթղթերը (այսուհետ՝ **Միջոցների տրամադրման հայտ**).

- Ստացողի գրավոր հայտ՝ կազմված Կառավարչի կողմից սահմանված ձևով.
- Ստացողի անունից Միջոցների տրամադրման հայտն ստորագրելու իրավասություն ունեցող անձի կամ անձանց իրավասությունների վերաբերյալ Կառավարչի համար բավարար ապացույցներ, ինչպես նաև յուրաքանչյուր նման անձի ստորագրության հաստատված նմուշ.
- այլ փաստաթղթեր, հաստատող Միջոցների տրամադրման հայտի հիմնավորումը, որոնք Կառավարչի կողմից կարող են հիմնավորված պահանջվել ինչպես տվյալ Հայտով միջոցների տրամադրումից առաջ, այնպես էլ հետո:

Միջոցների տրամադրման հայտը կազմվում և Ստացողի անունից ստորագրվում է Ստացողի լիազորված անձի կողմից:

Միջոցների տրամադրումն իրականացվում է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ ժամկետ սահմանված չէ Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով, Կառավարչի համար բավարար Միջոցների տրամադրման հայտ ստանալուց հետո և Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված բոլոր նախնական պայմանները կատարելու դեպքում.

բ) սույն բաժնի «ա» կետում նշված յուրաքանչյուր փաստաթղթի ձևը և բովանդակութունը պետք է բավարար լինեն, որպեսզի Կառավարիչը համոզվի, որ՝

- Ստացողն իրավունք ունի ստանալու Միջոցների տրամադրման հայտում իր կողմից նշված գումարը,
- Միջոցների տրամադրման հայտում նշված գումարը Ստացողի կողմից կօգտագործվի բացառապես Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով պայմանավորված նպատակների համար:

գ) Կառավարիչը Դրամաշնորհի գումարները տրամադրում է Միջոցների տրամադրման հայտի հիման վրա Կառավարչի կողմից սահմանված միջոցների տրամադրման ընթացակարգերին համապատասխան:

ԲԱԺԻՆ 2.02 *Ընդունելի ծախսերը՝ ըստ Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի*

Դրամաշնորհի միջոցներն Ստացողն օգտագործում է բացառապես Դրամաշնորհի մասին համաձայնագրով նախատեսված ծախսերի (այսուհետ՝ **Ընդունելի ծախսեր**) ֆինանսավորման համար վճարումներ կատարելու նպատակներով, որոնք բավարարում են միաժամանակ հետևյալ պահանջները.

- վճարումը նախատեսված է Ծրագրի համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների հիմնավորված գնի վճարման համար, որոնք գնվում են համաձայն գնումների կանոնների (ընթացակարգերի)՝ նշված համապատասխան Դրամաշնորհի մասին Համաձայնագրում և Դրամաշնորհի մասին Համաձայնագրի այլ պայմաններով, և ենթական են ֆինանսավորման Դրամաշնորհի միջոցներից.
- վճարումն արգելված չէ Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի որոշմամբ՝ ընդունված ՄԱԿ-ի կանոնադրության VII գլխի դրույթներին համապատասխան, կամ Եվրասիական տնտեսական միության իրավասու մարմինների որոշմամբ.
- վճարումը չի խախտում միջազգային իրավունքի և այն պետության ազգային օրենսդրության նորմերը, որի տարածքում իրականացվում է վճարումը.
- վճարումն իրականացված է Դրամաշնորհի մասին Համաձայնագրով նախատեսված ժամկետից ոչ շուտ և նախատեսված է մինչև դրամաշնորհի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթիվը կատարված ծախսերի վճարման համար:

ԲԱԺԻՆ 2.03. *Հարկեր*

ա) Եթե թույլատրված է Դրամաշնորհի մասին Համաձայնագրով, Դրամաշնորհի միջոցների օգտագործումը պարտադիր գանձումների վճարման համար, ներառյալ հարկային և մաքսային վճարները, տուրքերը, միջնորդավճարները և այլն, որոնք գանձվում են պետության կողմից կամ նրա տարածքում Ընդունելի ծախսերից կամ դրանց կապակցությամբ, կամ սահմանված դրանց ներմուծման, արտադրության, գնման կամ մատակարարման համար (այսուհետ՝ Հարկեր) իրականացվում են՝ պահպանելով Դրամաշնորհի միջոցների՝ տնտեսող և արդյունավետ օգտագործման սկզբունքները:

Եթե Կառավարիչը երբևէ համարի, որ ցանկացած նման Հարկի գումարը մեծ է, կամ որ նման Հարկն ունի խտրական բնույթ կամ հիմնավորված չէ, Կառավարիչն իրավասու է, Ստանդարտ պայմանների 8.01 բաժնին և 8.04-րդ բաժնի «գ» կետին համատասխան ծանուցելով Ստացողին, կարող է շտկել Դրամաշնորհի մասին համաձայնագրում նշված Ընդունելի ծախսերի չափաբաժինը, որոնք ենթական են ֆինանսավորման Դրամաշնորհի միջոցներից, որպեսզի ապահովի Դրամաշնորհների միջոցների՝ տնտեսող և արդյունավետ օգտագործման սկզբունքները: Նման շտկումն ուժի մեջ է մտնում Կառավարչի ծանուցման ամսաթվից:

բ) Դրամաշնորհի մասին համաձայնագրի վրա չեն տարածվում ոչ մի տեսակի հարկեր, որոնք գանձվում են Ստացողի կողմից կամ նրա տարածքում Դրամաշնորհի համաձայնագրի կնքման, գրանցման կամ հանձնման հետ կապված կամ արդյունքում:

ԲԱԺԻՆ 2.04. *Դրամաշնորհի միջոցների վերաբաշխումը ծախսերի տեսակների միջև*

Եթե Կառավարիչը ցանկացած ժամանակ հիմնավոր կերպով համարի, որ Դրամաշնորհի մասին Համաձայնագրով Ընդունելի ծախսերի ֆինանսավորման համար տրամադրված Դրամաշնորհի գումարը Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված ծախսերի ֆինանսավորման որևէ տեսակի համար բավարար չէ, ապա Կառավարիչը, ծանուցելով Ստացողին, համաձայն Ստանդարտ պայմանների 8.01-ին բաժնի և 8.04-րդ բաժնի «գ» կետի, իրավունք ունի.

ա) այլ տեսակից վերաբաշխել նշված տեսակի մեջ Դրամաշնորհի գումարն այն չափով, որն անհրաժեշտ է սպասվող պակասուրդը լրացնելու համար, եթե, Կառավարչի կարծիքով, Դրամաշնորհի մասին Համաձայնագրով այլ նման տեսակի համար տրամադրված միջոցների ծավալը գերազանցում է անհրաժեշտ ծավալը այն նպատակների իրագործման համար, որոնց համար այն տրամադրված է, և

բ) եթե սույն բաժնի «ա» կետում նշված վերաբաշխումը չի կարող ամբողջությամբ լրացնել միջոցների սպասվող պակասուրդը, ապա Կառավարիչն իրավունք ունի կրճատելու Ընդունելի ծախսերի տոկոսը, որոնք ենթակա են ֆինանսավորման այդ տեսակի համար Դրամաշնորհի միջոցներից, որպեսզի ապահովի նման ծախսերի վճարման համար միջոցների հետագա տրամադրման պայմանները:

Նման վերաբաշխումը կամ կրճատումն ուժի մեջ է մտնում Կառավարչի ծանուցման ամսաթվից:

ԲԱԺԻՆ 2.05. *Դրամաշնորհի միջոցների տրամադրման արժույթը*

Դրամաշնորհի ցանկացած գումարի տրամադրում կատարվում է Դրամաշնորհի Արժույթով:

Եթե Ընդունելի ծախսերի վճարման համար, համաձայն Միջոցների տրամադրման հայտի, ահնրաժեշտ է տրամադրել Դրամաշնորհի Արժույթից տարբեր այլ արժույթով միջոցներ, Կառավարիչը, գործելով Ստացողի հանձնարարությամբ և հանդես գալով որպես նրա գործակալ, Կառավարչի կողմից սահմանված պայմաններով Դրամաշնորհի Արժույթով ձեռք է բերում այն արժույթները, որոնք հիմնավոր կերպով պահանջվել են Ստացողի կողմից՝ Ընդունելի ծախսերի վճարման համար: Նշված գործառույթը Դրամաշնորհի միջոցների տրամադրման գործառույթ է և արտահայտվում է հաշվառման մեջ Դրամաշնորհի արժույթով՝ որպես Դրամաշնորհի միջոցների տրամադրում Ստացողին:

ԲԱԺԻՆ 2.06. *Հաշվառման վարում*

Կառավարիչը վարում է Դրամաշնորհի միջոցների հետ գործարքների հաշվառում առանձին հաշիվներով կամ հաշվով Դրամաշնորհի արժույթով:

ԲԱԺԻՆ 2.07. *Արժույթների արժեքի գնահատում*

Այն դեպքում, երբ Դրամաշնորհի մասին Համաձայնագրի նպատակների համար անհրաժեշտություն է ծագում արտահայտել մի Արժույթի արժեքը այլ Արժույթով, նման արժեքը հիմնավոր կերպով որոշվում է Կառավարչի կողմից:

ՀՈԴՎԱԾ III. Ծրագրի իրականացում

ԲԱԺԻՆ 3.01 *Ծրագրի իրականացում*

Ստացողն ապահովում է՝

ա) Ծրագրի իրականացումը՝

- անհրաժեշտ բարեխղճությամբ և արդյունավետությամբ.

- համապատասխան պատշաճ վարչական, տեխնիկական, ֆինանսական, էկոլոգիական և սոցիալական նորմերի և փորձի համաձայն.

- Դրամաշնորհի տրամադրման մասին համաձայնագրի դրույթների համաձայն.

բ) Ծրագրի ֆինանսավորման համար դրամական միջոցների, ինչպես նաև տեխնիկական միջոցների, սարքավորումների, ծառայությունների և այլ ռեսուրսների տրամադրումը, որոնք պահանջվում են Ծրագրի արդյունավետ իրականացման ժամկետներն ապահովելու համար.

գ) Դրամաշնորհի տրամադրման մասին համաձայնագրում նշված՝ Կառավարչի կողմից սահմանված գնումների ընթացակարգերին համապատասխան՝ Դրամաշնորհի միջոցների հաշվին Ծրագրի իրականացման համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման իրականացումը.

դ) Դրամաշնորհի միջոցներից ֆինանսավորվող բոլոր ապրանքների ապահովագրում բոլոր տեսակի ռիսկերից դրանց ձեռք բերման, տեղափոխման և օգտագործման կամ մոնտաժման վայր առաքման ժամանակ: Այդ տեսակի ապահովագրության պայմանները պետք է նախատեսեն ցանկացած փոխհատուցման վճարում՝ կապված նման ապահովագրության հետ, ազատ շրջանառվող արժույթով նման ապրանքների փոխարինման կամ վերանորոգման նպատակով.

ե) Ծրագրի ֆինանսավորման համար հատկացված միջոցներով ձեռք բերված բոլոր ապրանքների, աշխատանքների և ծառայությունների օգտագործումը բացառապես Ծրագրի նպատակների համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Կառավարիչը համաձայնում է այլ պայմանի: Նման համաձայնությունը պետք է իրականացվի Կառավարչի կողմից ըստ Ստացողի կողմից ծանուցման միջոցով ուղարկված հարցման՝ համաձայն Ստանդարտ պայմանների 8.01-ին բաժնի և 8.04-րդ բաժնի «գ» կետի.

զ) հողամասերի և հողամասերի նկատմամբ իրավունքների ձեռք բերում, որոնք պահանջվում են Ծրագրի կատարման համար, և Կառավարչի հայտով նրան անհապաղ բավարար ապացույցների տրամադրումը այն մասին, որ նման հողամասերը և հողամասերի նկատմամբ իրավունքները առկա են անհրաժեշտ ծավալով Ծրագրի նպատակների իրականացման համար.

է) Ծրագրին վերաբորող բոլոր օբյեկտների պատշաճ շահագործման և պահպանման իրականացումը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նման օբյեկտների անհապաղ վերանորոգումը և վերակառուցումը.

ը) Շրջակա միջավայրի պահպանության, աշխատանքի և անվտանգության տեխնիկայի պաշտպանությունը կարգավորող՝ Միջազգային և ազգային ստանդարտների ապահովումը, որոնք կիրառելի են ըստ Ծրագրի առանձնահատկության.

թ) Կառավարչի նախնական համաձայնության ստացումը հետևյալ գործողություններից ցանկացածի իրագործման համար.

- Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող բոլոր ակտիվների, օբյեկտների կամ կառույցների սեփականության իրավունքի-ցանկացած փոփոխություն,

- Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող բոլոր ակտիվների, օբյեկտների կամ կառույցների ցանկացած վաճառք, փոխանցում կամ վերահսկողության կամ չափաբաժնի զիջում,

- Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող որևէ ակտիվի, օբյեկտի կամ կառույցի ցանկացած վարձույթ կամ բովանդակության և շահագործման լիազորությունների կամ գործառույթների փոփոխման կամ փոխանցման մասին այլ պայմանագիր:

Կառավարչի համաձայնության ստացման դեպքում Ստացողն ապահովում է, որ ցանկացած նման փոփոխություն իրականացվի օրինական և թափանցիկ կերպով:

ԲԱԺԻՆ 3.02. *Պլաններ, փաստաթղթեր, հաշվառում*

Դրամաշնորհի մասին համաձայնագրի շրջանակներում Ստացողն ապահովում է՝

ա) օպերատիվ, ըստ պատրաստվածության աստիճանի և այն մակարդակի դետալավորման, որը հիմնավորվում է Կառավարչի հարցմամբ բոլոր պլանների, ժամանակացույցերի Դրամաշնորհի միջոցների հաշվին գնումների փաստաթղթերի, պայմանագրային փաստաթղթերի (ներառյալ պայմանագրերով սկզբնական հաշվառման փաստաթղթերը), Ծրագրին վերաբերող հաշվետվությունների տարամադրումը Կառավարչին, ինչպես նաև տվյալ փաստաթղթերին կից ցանկացած փոփոխությունը կամ լրացումը.

բ) հաշվառման փաստաթղթերի վարումը, որոնք բավարար են Ծրագրի իրականացման ընթացքի գնահատման համար (ներառյալ Ծրագրի ծախսերը և օգուտները, որոնք նա պետք է տա)՝ Դրամաշնորհի միջոցների հաշվին գնված ապրանքների, աշխատաքների և ծառայությունների նույնականացման և Ծրագրի շրջանակներում դրանց օգտագործման մասին տեղեկատվության տրամադրման նպատակով, և այդ հաշվառման փաստաթղթերի տրամադրումը Կառավարչին՝ ըստ նրա հայտի.

գ) Դրամաշնորհի միջոցների հաշվին կատարված ծախսերը հաստատող սկզբնական հաշվառման բոլոր փաստաթղթերի պահպանումը (ներառյալ պայմանագրերը, արձանագրությունները, հաշվետվությունները, հաշիվները, հաշիվ-ապրանքագրերը, ստացականները, անդորրագրերը և այլն) մինչ ժամկետներից մեկի լրանալը, որն ավելի ուշ է լրանում, քան՝

- մեկ տարի հետո՝ աուդիտորների կողմից ստուգված Ծրագրի ֆինանսական հաշվետվությունը Կառավարչին տրամադրելու պահից, որը ներառում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվել է Դրամաշնորհի միջոցների վերջին տրամադրումը,

- երկու տարի հետո՝ սկսած Դրամաշնորհի հասանելիության ժամանակահատվածի ավարտից:

Նշված ժամանակահատվածի ընթացքում Ստացողը Կառավարչի ներկայացուցիչներին տրամադրում է այդ տեսակի հաշվառման փաստաթղթերն ուսումնասիրելու հնարավորություն:

ԲԱԺԻՆ 3.03. *Ծրագրի մշտադիտարկում և գնահատում*

Դրամաշնորհի մասին համաձայնագրի շրջանակներում Ստացողն ապահովում է՝

ա) Ծրագրի իրականացման ընթացքի և Ծրագրի նպատակների իրականացման մշտական դիտարկում և գնահատում՝ օգտագործելով Կառավարչի համար ընդունելի ցուցիչներ,

բ) պարբերաբար հաշվետվությունների կազմումը, որոնք ձևով և բովանդակությամբ բավարար կլինեն Կառավարչի համար, ամփոփելով նմանատիպ մշտադիտարկման և գնահատման արդյունքները և միջոցառումների շարադրումը, որոնք կապահովեն Ծրագրի հետագա արդյունավետ կատարումը և նպատակների իրականացումը,

գ) սույն բաժնի «բ» կետում նշված յուրաքանչյուր հաշվետվության օպերատիվ՝ ըստ պատրաստվածության աստիճանի տրամադրումը Կառավարչին, նման հաշվետվությունների վերաբերյալ Ստացողի հետ կարծիքների փոխանակման հնարավորության տրամադրումը Կառավարչին, ինչպես նաև Կառավարչի կողմից առաջարկված միջոցների իրականացումը՝ հաշվի առնելով կոնկրետ հարցերով Կառավարչի դիրքորոշումը,

դ) Դրամաշնորհի հասանելիության ժամանակահատվածի ավարտի Ամսաթվից ոչ ուշ, քան վեց ամիս հետո կամ ավելի վաղ ժամկետին, որն այդ նպատակով կարող է համաձայնեցվել Դրամաշնորհի մասին համաձայնագրում, Ծրագրի իրականացման մասին հաշվետվության կազմումը և այն Կառավարչին ուղարկելը, Դրամաշնորհի մասին համաձայնագրով նախատեսված՝ Ստացողի կողմից իր պարտավորությունների կատարման և Ծրագրի իրականացման նպատակների մասին հաշվետվությունների՝ այն ծավալով և մանրամասնությամբ կազմումը և Կառավարչին ուղարկելը, որոնք հիմնավոր պահանջվել են Կառավարչի կողմից, ինչպես նաև՝ Ծրագրի արդյունքների կայունության ապահովման ուղղությամբ գործողությունների պլանը:

ԲԱԺԻՆ 3.04. *Ֆինանսական կառավարում*
Ֆինանսական հաշվետվություն: Աուդիտ
Ստացողն ապահովում է՝

ա) Դրամաշնորհի միջոցների ֆինանսական կառավարումը, ներառյալ հաշվառման փաստաթղթերի և հաշվապահական հաշիվների վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումը՝ Կառավարչի համար հաշվապահական հաշվառման և հաշետվության ընդունելի կանոններով, որոնք հաջորդականորեն կիրառվում են և պատշաճ կերպով արտացոլում են Ծրագրի հետ կապված գործունեությունը, ռեսուրսները և ծախսերը,

բ) սույն բաժնի «ա» կետում նշված ֆինանսական հաշվետվության աուդիտի անցկացումը յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար (կամ Կառավարչի հետ համաձայնեցված այլ ժամանակահատվածում)՝ հաջորդականորեն կիրառվող Ստանդարտներին համապատասխան, որոնք ընդունելի են Կառավարչի համար, ներգրավելով Կառավարչի համար ընդունելի անկախ աուդիտորների,

գ) Դրամաշնորհի մասին համապատասխան համաձայնագրում նշված ժամկետներում Կառավարչին նման աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվության հաստատված պատճենների, ֆինանսական հաշվետվության վերաբերյալ վերը նշված աուդիտորների կարծիքների (եզրակացությունների) տրամադրումը Կառավարչի համար բավարար ծավալով և մանրամասնություններով, ինչպես նաև աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվության մասին այլ տեղեկատվության և աուդիտորական եզրակացության տրամադրումը, որը Կառավարիչը կարող է պարբերաբար հիմնավորված պահանջել:

ԲԱԺԻՆ 3.05. *Կառավարչի և Ստացողի միջև փոխգործակցությունը*

Ստացողը և Կառավարիչն աշխատում են սերտ համագործակցությամբ՝ Ծրագրի առաջադրանքների և նպատակների իրականացման ապահովման, ինչպես նաև Ծրագրի միջոցառումների՝ ժամանակին և արդյունավետ կատարման համար, այդ թվում՝

ա) ըստ անհրաժեշտության՝ կողմերից մեկի նախաձեռնությամբ փոխանակում են կարծիքներ՝ կապված Ծրագրի իրականացման և Դրամաշնորհի տրամադրման մասին համաձայնագրով նախատեսված պարտավորությունների կատարման հետ, և մյուս կողմին ներկայացնում են ամբողջ տեղեկատվությունը՝ կապված նման հարցերի հետ, որը նա կարող է հիմնավորված պահանջել,

բ) միմյանց անհապաղ տեղեկացնում են բոլոր հանգամանքների մասին, որոնք հանդիսանում են կամ կարող են խոչընդոտ հանդիսանալ տվյալ հարցերի քննարկման և լուծման համար:

ԲԱԺԻՆ 3.06. *Ծրագրի վերահսկումը Ստացողի տարածքում*

Ստացողը Կառավարչի ներկայացուցիչներին ընձեռում է հետևյալ հնարավորությունները.

ա) այցելել Ստացողի տարածքի ցանկացած հատված՝ Ծրագրի իրականացման հետ կապված նպատակներով կամ Դրամաշնորհին վերաբերող,

բ) այցելել Ծրագրի իրականացման հետ կապված ցանկացած օբյեկտ և շինարարական հրապարակ,

գ) վերահսկել Ծրագրի շրջանակներում Դրամաշնորհի միջոցների հաշվին գնված ապրանքները, ինչպես նաև Ծրագրին վերաբերող բոլոր արտադրությունները, տեղակայանքները, հրապարակները, գործարանները, շենքերը, գույքը, սարքավորումները և նյութերը,

դ) ստանալ և վերահսկել Դրամաշնորհի տրամադրման մասին համաձայնագրով նախատեսված իր պարտավորությունների կատարման հետ կապված հաշվառման փաստաթղթերը:

ՀՈԴՎԱԾ IV. Տեղեկատվության տրամադրումը

ԲԱԺԻՆ 4.01. *Ֆինանսական և տնտեսական տվյալներ*

Ստացողը Կառավարչի հարցման հիման վրա տրամադրում է.

ա) իր տարածքում ֆինանսական և տնտեսական պայմանների մասին ամբողջ տեղեկատվությունը, որը հիմնավորված պահանջում է Կառավարիչը, ներառյալ նրա վճարային հաշվեկշռի և Արտաքին պարտքի մասին տեղեկատվությունը,

բ) նմանատիպ տեղեկատվություն նրա սուբյեկտների, քաղաքական և վարչական մարմինների, հիմնարկությունների և բոլոր կազմակերպությունների մասին, որոնք.

- պատկանում են Ստացողին,
- վերահսկվում են Ստացողի կողմից,
- գործում են Ստացողի անունից՝ նրա շահերից ելնելով,
- գործում են ցանկացած նման մարմնի կամ կազմակերպության անունից և նրա շահերից ելնելով,
- կատարում են Ստացողի կենտրոնական (ազգային) բանկի կամ արժութային կարգավորող հիմնադրամի գործառույթները կամ նմանատիպ գործառույթներ:

ՀՈԴՎԱԾ V. Չեղարկումը: Կասեցումը: Փոխհատուցումը

ԲԱԺԻՆ 5.01. *Ստացողի կողմից Դրամաշնորհի միջոցների չեղյալ հայտարարումը*

Ստացողն իրավունք ունի, ծանուցելով Կառավարչին, չեղարկել Դրամաշնորհի ցանկացած չօգտագործված գումար:

Ստացողի կողմից նման գրավոր ծանուցում ուղարկվելու ամսաթիվ է համարվում դրանում նշված՝ Դրամաշնորհի գումարի չեղարկման ամսաթիվը: Չեղարկումն ուժի մեջ է մտնում Կառավարչի կողմից Ստացողին չեղարկման մասին գրավոր հաստատում ուղարկելու ամսաթվից:

Եթե նշված ծանուցումը Կառավարիչն ստանում է Ստացողի՝ այն ուղարկելու պահից մեկ օրացուցային ամսվա ընթացքում, դրանում նշված գումարի չեղարկման ամսաթիվ է համարվում Կառավարչի կողմից Ստացողին չեղարկման մասին գրավոր հաստատում ուղարկվելու ամսաթիվը:

ԲԱԺԻՆ 5.02. *Դրամաշնորհի միջոցների տրամադրման՝ Ստացողի իրավունքի կասեցումը*

Այն դեպքում, երբ կկատարվի և կշարունակվի ստորև նշված իրադարձություններից մեկը, Կառավարիչն իրավունք ունի, Ստացողին ծանուցելով, ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնելու Դրամաշնորհի միջոցների տրամադրման Ստացողի իրավունքը: Նման կասեցումը կգործի Ստացողին Կառավարչի ծանուցելու պահից մինչև այն պահը, երբ կվերանան կասեցումն առաջացրած պատճառները, եթե Կառավարիչը չի ծանուցի Ստացողին միջոցների տրամադրման իրավունքի վերականգնման մասին միչև կասեցման պատճառների վերացումը.

ա) Ստացողը չի կատարել կամ չի ապահովել Հիմնադրամի հիմնադրման մասին Պայմանագրով, Հիմնադրամի մասին կանոնակարգով, Հիմնադրամի միջոցների կառավարման մասին Համաձայնագրով, ինչպես նաև նրա հետ կնքված՝ Հիմնադրամի միջոցների տրամադրման մասին ցանկացած Համաձայնագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

բ) Ստացողը չի կատարել Հիմնադրամի մասնակից պետությանը, Կառավարչին կամ ՄՖԿ-ին հասանելիք՝ Հիմնական պարտքի մարման, տոկոսների կամ ցանկացած այլ գումարի վճարում Ստացողի և Հիմնադրամի մասնակից պետության, Կառավարչի կամ ՄՖԿ միջև կնքված Համաձայնագրով սահմանված ժամկետներում:

գ) Իրավաբանական անձը, որի բաժնետեր կամ մասնակից է Ստացողը, չի կատարել Հիմնական պարտքի մարման, տոկոսների կամ ցանկացած այլ գումարի վճարումներ իրավաբանական անձի և Կառավարչի միջև կնքված Համաձայնագրով սահմանված ժամկետներում:

դ) Ծագել է արտակարգ իրավիճակ, որը, Կառավարչի կարծիքով, քիչ հավանական է դարձնում այն, որ Ծրագիրը կարող է իրականացվել, կամ կողմերից որևէ մեկը կարող է կատարել Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունները:

ե) Ստացողի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի կապակցությամբ ներկայացված ցանկացած տեղեկատվություն կամ հաշվետվություն էականորեն սխալ է:

զ) Տեղի է ունեցել ստորև բերված իրադարձություններից մեկը, որը վերաբերում է Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված ֆինանսավորման տրամադրման պարտավորություններին, որը պետք է տրամադրվի Ծրագրի նպատակների համար (Համաֆինանսավորում) որևէ կազմակերպության կողմից՝ բացառությամբ Կառավարչի (Համաֆինանսավորող կազմակերպություն)՝

- Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրում նշված է ժամկետ, որի վրա հասնելու ժամանակ Համաֆինանսավորող կազմակերպության հետ կնքված Համաֆինանսավորման տրամադրման մասին Համաձայնագիրը (Համաֆինանսավորման համաձայնագիր) պետք է մտներ ուժի մեջ, սակայն Համաֆինանսավորման մասին համաձայնագիրը չի մտել ուժի մեջ այդ կամ ավելի ուշ ժամկետում՝ Կառավարչի կողմից հաստատված՝ Ստանդարտ պայմանների 8.01-ին բաժնի կարգի համաձայն.

- Համաֆինանսավորման միջոցների ստացման իրավունքն ամբողջությամբ կամ մասնակի կասեցվել, չեղարկվել կամ դադարեցվել է Համաֆինանսավորող կազմակերպության կողմից՝ Համաֆինանսավորման մասին համաձայնագրի պայմանների համաձայն, եթե նման կասեցումը, չեղարկումը կամ դադարեցումը կապված էին Համաֆինանասավորում ստացողի կողմից Համաֆինանսավորման մասին համաձայնագրով պարտավորությունները չկատարելու հետ.

- Համաֆինանսավորող կազմակերպությունը պահանջ է ներկայացրել Ծրագրի Համաֆինանսավորման համար հատկացված միջոցների վաղաժամ մարման համար, եթե նման պահանջն առաջացել է Համաֆինանսավորում ստացողի կողմից Համաֆինասավորման մասին համաձայնագրով պարտավորությունները չկատարելու հետ:

Սույն կետի դրույթները չեն կիրառվում այն դեպքում, երբ Ստացողը Կառավարչին ներկայացնում է Կառավարչի համար բավարար ապացույցներ այն մասին, որ Ծրագրի Համաֆինանսավորման բավարար միջոցներ կարելի է ստանալ այլ աղբյուրներից՝ Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի պայմաններով:

է) Ստացողը, առանց Կառավարչի համաձայնության, ամբողջությամբ կամ մասնակիորեն վերազիջել է Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված իր պարտավորություններից որևէ մեկը:

ը) Ստացողը, առանց Կառավարչի համաձայնության, վաճառել է, հանձնել է վարձակալության, փոխանցել է, վերազիջել կամ այլ կերպով կատարել է որևէ գույքի ակտիվների կամ կառույցների օտարում, որոնք ամբողությամբ կամ մասնակիորեն ֆինանսավորվում էին Դրամաշնորհի միջոցներից՝ այն պայմանով, որ սույն կետի դրույթները չեն տարածվում այն գործառույթների վրա, որոնք իրականացվում են սովորական գործունեության կարգով և, Կառավարչի կարծիքով, էական և բացասական ազդեցություն չեն գործում Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված՝ Ստացողի կողմից իր պարտավորությունների կատարման կամ Ծրագրի նպատակների իրականացման ապահովման վրա:

թ) Ստացողն այլևս Հիմնադրամի մասնակից չէ:

ժ) Տեղի է ունեցել ցանկացած այլ իրադարձություն՝ նշված Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրում, սույն բաժնի նպատակների համար:

Բաժին 5.03. *Դրամաշնորհի միջոցների տրամադրման վերաբերյալ Ստացողի իրավունքի չեղարկում*

Այն դեպքում, երբ տեղի կունենա և կշարունակվի ստորև նշված իրադարձություններից մեկը, Կառավարիչն իրավունք ունի, Ստացողին ծանուցում ուղարկելով, չեղարկել Դրամաշնորհի միջոցների որևէ մասի ստացման Ստացողի իրավունքը: Նման ծանուցման ուղարկման ամսաթիվը համարվում է դրանում նշված՝ գումարի չեղարկման ամսաթիվը.

ա) Դրամաշնորհի միջոցների ստացման Ստացողի իրավունքը կասեցվել է Դրամաշնորհի չօգտավործված որևէ գումարի նկատմամբ ավելի քան երեսուն օր շարունակ:

բ) Կառավարիչը, խորհրդակցելով Ստացողի հետ, որոշում է ընդունել այն մասին, որ Դրամաշնորհի չօգտավործված որևէ գումար չի պահանջվի Ընդունելի ծախսերի ֆինանսավորման համար:

գ) Կառավարիչը, Դրամաշնորհի միջոցներից ֆինանսավորման ենթակա որևէ պայմանագրի հետ կապված, հիմնավորված եզրակացնում է, որ Ստացողի ներկայացուցիչները պայմանագրով նախատեսված գնումների ընթացքում կամ դրա կատարման ժամանակ ներգրավված են եղել կաշառակերության, խարդախության, դավադրության կամ ճնշում գործադրելու մեջ, իսկ Ստացողը չի ձեռնարկել Կառավարչի համար բավարար, ժամանակին և պատշաճ միջոցներ իրավիճակը շտկելու համար: Այս դեպքում Կառավարիչը որոշում է Դրամաշնորհի միջոցների չեղարկման ենթակա գումարները՝ ելնելով նման պայմանագրի ծախսերի ծավալից, որը, Կառավարչի տեսակետից, ընդունելի կլիներ Դրամաշնորհի միջոցներից ֆինանսավորման համար:

դ) Կառավարիչը հիմնավորված եզրակացնում է, որ Դրամաշնորհի միջոցներից վճարվող որևէ պայմանագրի գնում չի համապատասխանում Դրամաշնորհի մասին Համաձայնագրում շարադրված կամ նշված պայմաններին (ընթացակարգերին): Այս դեպքում Կառավարիչը որոշում է Դրամաշնորհի միջոցների չեղարկման ենթակա գումարները՝ ելնելով նման պայմանագրի ծախսերի ծավալից, որը, Կառավարչի տեսակետից, ընդունելի կլիներ Դրամաշնորհի միջոցներից ֆինանսավորման համար:

ե) Դրամաշնորհի հասանելիության ժամանակահատվածի ավարտի Ամսաթվի լրանալուց հետո մնում է չօգտագործված մնացորդ: Դրամաշնորհի այդպիսի չօգտագործված մնացորդը Դրամաշնորհի հասանելիության ժամանակահատվածի ավարտի Ամսաթվի լրանալուց հետո ավտոմատ չեղարկվում է Կառավարչի կողմից՝ առանց որևէ ծանուցման ուղարկման:

զ) Տեղի է ունեցել ցանկացած այլ իրադարձություն, որը համաձայնեցված է Դրամաշնորհի մասին Համաձայնագրում սույն բաժնի նպատակների համար:

ԲԱԺԻՆ 5.04. *Փոխհատուցում*

Եթե Կառավարիչը բացահայտում է, որ Դրամաշնորհի որևէ գումար Ստացողի կողմից օգտագործվել է Ստանդարտ պայմանների և Դրամաշնորհի մասին Համաձայնագրի դրույթների խախտմամբ, այդ թվում նաև՝

- եթե Դրամաշնորհի միջոցները Ստացողի կողմից օգտագործվել են այն ծախսերի վճարման համար, որոնք չեն համարվում Ընդունելի ծախսեր.
- եթե Դրամաշնորհի միջոցները օգտագործվել են Համաձայնագրով սահմանված գործընթացների խախտմամբ.
- եթե տեղի է ունեցել սույն Ստանադարտ պայմանների 5.03-րդ բաժնի «գ» և «դ» կետերում նշված իրադարձություններից որևէ մեկը,

Կառավարիչն իրավունք ունի Ստացողից պահանջելու նման գումարի փոխհատուցում, իսկ Ստացողը Կառավարչի համապատասխան պահանջից հետո անհապաղ պետք է փոխհատուցի Կառավարչին՝ ապահովելով հետևյալ պայմանների կատարումը.

ա) Փոխհատուցման հաշվի վճարումը կատարվում է Դրամաշնորհի արժույթով, Կառավարչի հաշվին, որը նշված է փոխհատուցման մասին պահանջում,

բ) վճարումը կատարվում է առանց որևէ սահմանափակման, Ստացողի կողմից սահմանված կամ նրա տարածքում և առանց Ստացողի կամ նրա տարածքում գանձվող որևէ հարկի հաշվանցման և հաշվարկման,

գ) վճարումը կատարվում է Ստացողի կողմից՝ առանց հանդիպակաց պահանջների հաշվանցման իրավունքի, ցանկացած տեսակի նվազեցման և պահումի: Ստացողի հետ հաշվարկների ժամանակ Կառավարիչն իրավասու է իրականացնելու հանդիպակաց պահանջների հաշվանցում,

դ) եթե Ստացողը Հարկերի հաշվին պետք է իրականացնի նվազեցումներով կամ պահումներով վճարում, թղթակից բանկերի միջնորդավճարների վճարումներ կամ այլ հիմքերով վճարումներ, ապա Ստացողի կողմից վճարվող գումարը պետք է ավելացվի այն գումարի չափով, որ անհրաժեշտ նվազեցումից կամ պահումից հետո Կառավարիչը ստանա գումար, որը հավասար կլինի այն գումարին, ինչը կստացվեր, եթե նման նվազեցումներ և պահումներ չիրականացվեին կամ չպահանջվեին:

Կառավարչի կողմից վճարման ստացումից հետո համապատասխան Դրամաշնորհի գումարը չեղարկվում է:

ԲԱԺԻՆ 5.05. *Դրամաշնորհի մասին Համաձայնագրի գործողությունը չեղարկումից, կասեցումից կամ վաղաժամ մարման պահանջ ներկայացնելուց հետո*

Չնայած չեղարկմանը, կասեցմանը կամ փոխհատուցման մասին պահանջի ներկայացմանը սույն հոդվածին համապատասխան՝ Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի բոլոր դրույթները շարունակում են գործել ամբողջ ծավալով, եթե Ստանդարտ պայմաններով կամ Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ:

ՀՈԴՎԱԾ VI. Պարտավորությունների հարկադիր կատարում: Արբիտրաժ

ԲԱԺԻՆ 6.01. *Պարտավորությունների հարկադիր կատարման հնարավորություն*

ա) Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված Ստացողի իրավունքներն ու պարտականություններն ունեն իրավաբանական ուժ և ապահովված են հարկադիր կատարման հնարավորությամբ՝ Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի, Ստանդարտ պայմանների և Հիմնադրամի փաստաթղթերի դրույթների համաձայն, անկախ Ստացողի օրենսդրության որևէ այլ դրույթից:

բ) Ստացողն իրավունք չունի պնդելու, որ Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի և Ստանդարտ պայմանների որևէ դրույթ չունի իրավաբանական ուժ կամ ենթակա չէ հարկադիր կատարման՝ Ստացողի օրենսդրության որևէ դրույթի, Հիմնադրամի փաստաթղթերի և/կամ Կառավարչի փաստաթղթերի համաձայն:

գ) Սույնով Ստացողը հաստատում և հավաստիացնում է Կառավարչին այն մասին, որ ինքը և իր գույքը չունեն դատական անձեռնմխելիություն, հայցի ապահովման միջոցների նկատմամբ անձեռնմխելիությունը, որոշման կամ հրամանի հարկադիր կատարման նկատմամբ անձեռնմխելիությունը, և սույնով Ստացողն անդառնալի հրաժարվում է իր և իր գույքի նկատմաբ ցանկացած անձեռնմխելիությունից, որը նա կարող է ձեռք բերել, լինի դա պետական կամ այլ անձեռնմխելիություն հաշվանցումից կամ դատական ընթացակարգերից ցանկացած պետությունում, ներառյալ ցանկացած դատարանի կամ տրիբունալի նկատմամբ անձեռնմխելիությունը, ինչպես նաև իր գույքի անձեռնմխելիությունը նախնական ապահովման միջոցերից կամ այլ ապահովման միջոցներից կամ դատական որոշման կատարումից:

դ) Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրում և/կամ Ստանդարտ պայմաններում պարունակվող ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել որպես հրաժարական, մերժում կամ փոփոխություն անձեռնմխելիությունների, առավելությունների, արտոնությունների և պատասխանատվությունից ազատելու նկատմամբ՝ նախատեսված Կառավարչի գործունեությունը կարգավորող միջազգային պայմանագրերով, այլ կիրառելի միջազգային պայմանագրերով և իրավունքով:

ե) Կառավարչի դեմ հայցերը և գործերը կարող են հարուցվել միայն Կառավարչի կողմից անձեռնմխելիությունից, առավելություններից, արտոնություններից հրաժարվելուց հետո՝ կատարված Կառավարչի կողմից այն աստիճանով և այն պայմաններով, որոնք, նրա կարծիքով, համապատասխանում են Կառավարչի շահերին: Անձեռնմխելիությունից, առավելություններից կամ արտոնություններից (դրանց որևէ մասից) նման հրաժարականը պետք է կատարվի Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին համաձայնագով նախատեսված կարգով:

ԲԱԺԻՆ 6.02. *Իրավունքների իրականացման հետաձգում*

Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով Կողմերին հասանելի որևէ իրավունքի, իրավասության կամ իրավական պաշտպանության միջոցի իրականացման

հետաձգում կամ չիրականացում որևէ պարտավորություն չկատարելու դեպքում չի նվազեցնում նման իրավունքները, իրավասությունները կամ իրավական պաշտպանության միջոցները և չի համարվում դրանցից հարաժարում կամ պարտավորությունները չկատարելու հետ լուռ համաձայնություն:

Նման կողմի ոչ մի գործողություն կամ անգործություն պարտավորությունների չկատարման նկատմամբ չի շոշափում և չի նվազեցնում ոչ մի իրավունք, իրավասություն կամ իրավական պաշտպանության միջոց ցանկացած այլ կամ հաջորդող պարտավորության չկատարման նկատմամբ:

ԲԱԺԻՆ 6.03. *Արբիտրաժ*

ա) Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի կողմերի միջև ծագած ցանկացած տարաձայնություն կամ կողմերից որևէ մեկի ցանկացած պահանջ մյուս կողմի հանդեպ, որը ծագել է Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի կապակցությամբ և չի կարգավորվել Կողմերի միջև պայմանավորվածությամբ ծագման պահից վեց ամսից ոչ պակաս ժամկետում, վեճի ցանկացած կողմի կողմից փոխանցվում է Հիմնադրամի Խորհրդին՝ լուծման համար:

բ) Այն դեպքում, երբ վեճը չի լուծվել Հիմնադրամի Խորհրդի կողմից սույն բաժնի «ա» կետով նախատեսված կարգով, վեճի ցանկացած կողմ կարող է վեճը փոխանցել միջնորդ դատարանի քննությանը, որը կազմված է երեք միջնորդ դատավորից, որոնցից մեկը նշանակվում է Հիմնադրամի Խորհրդի կողմից, մյուսը՝ Ստացողի, իսկ երրորդը՝ նշանակված միջնորդ դատավորների համաձայնեցմամբ, կամ եթե դատավորները իրենց նշանակման պահից վեց ամսվա ընթացքում համաձայնության չգան՝ Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային դատարանի նախագահի կողմից: Երրորդ միջնորդ դատավորի ընտրության ժամանակ նշանակված դատավորներն առաջնորդվում են այն կանոնով, որ նա չի կարող լինել վիճող կողմի պետության քաղաքացի կամ վիճող կողմի՝ միջազգային կազմակերպության ներկայացուցիչ:

գ) Վեճի քննության ժամանակ միջնորդ դատավորներն առաջնորդվում են ՅՈՒՆՍԻՏՐԱԼ Արբիտրաժային կանոնակարգով: Արբիտրաժային քննության լեզուն ռուսերենն է: Արբիտրաժային քննության վայրը Մոսկվա քաղաքն է:

դ) Չնայած ՅՈՒՆՍԻՏՐԱԼ Արբիտրաժային կանոնակարգի դրույթներին՝ արբիտրաժային դատարանն իրավասու չէ Կառավարչի հանդեպ ձեռնարկել պաշտպանության ժամանակավոր միջոցներ կամ հայցի ապահովման միջոցներ մինչև արբիտրաժային որոշում կայացնելը, և Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի Կողմերից ոչ ոք չի կարող դիմել որևէ դատական ատյան Կառավարչի հանդեպ պաշտպանության ժամանակավոր միջոցներ կամ հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու միջնորդությամբ մինչև արբիտրաժային որոշում կայացնելը:

ե) Արբիտրաժային դատարանն իրավասու է քննելու և ցանկացած վարույթում, սահմանման մեջ կամ արբիտրաժային որոշման մեջ ներառելու ցանկած վեճ կամ տարաձայնություն, պատշաճ կերպով Կառավարչի կամ Ստացողի կողմից հանձնված նրա քննությանը, այն չափով, որով. վեճը կամ տարաձայնությունը ծագել են Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրից: Ընդ որում, հաշվի առնելով սույն կետը, արբիտրաժային վարույթում չի ներառվում ոչ մի այլ կողմ, և այն չի միավորվում այլ կողմերի մասնակցությամբ քննության հետ:

զ) Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի նպատակների համար կիրառելի իրավունք է հանդիսանում միջազգային հանրային իրավունքը, որի աղբյուրներն են՝ Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի նպատակների համար.

- Հիմնադրամի հիմնադրման մասին Պայմանագիրը, Հիմնադրամի միջոցների կառավարման մասին Համաձայնագիրը, Կառավարչի հիմնադրման մասին Համաձայնագիրը, Ստացողի տարածքում Կառավարչի գտնվելու պայմանների մասին Համաձայնագիրը (եթե կիրառելի է), ինչպես նաև ցանկացած այլ համաձայնագիր և պայմանագիր, որոնք Կողմերի համար ստեղծում են փոխադարձ իրավունքներ և պարտավորություններ.

- բոլոր միզազգային կոնվենցիաների և պայմանագրերի դրույթները, որոնք պարտադիր ուժ ունեն Ստացողի համար՝ ճանաչված որպես սովորութային իրավունքի համակարգված պարտադիր նորմեր, համապատասխան կարգով կիրառվող պետությունների և ՄՖԿ նկատմամբ, կամ հաստատված որպես նման նորմեր.

- բոլոր միջազգային կոնվենցիաների և պայմանագրերի դրույթները, որոնք Կառավարչի համար պարտադիր ուժ ունեն կամ չունեն, ճանաչված որպես սովորութային իրավունքի համակարգված պարտադիր նորմեր, համապատասխան կարգով կիրառվող պետությունների և ՄՖԿ նկատմամբ, կամ հաստատված որպես նման նորմեր.

- միջազգային սովորույթների այլ ձևեր, ներառյալ պետությունների և ՄՖԿ փորձը, որն ունի իրավական պարտավորությունների ստեղծման համար անհրաժեշտ բազմանշանակություն, հաջորդականություն և շարունակելիություն.

- իրավունքի ընդհանուր կիրառելի սկզբունքները:

Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով լրացուցիչ կարող են սահմանվել կիրառելի իրավունքի այլ աղբյուրներ:

է) Համաձայնագրով դատարանի որոշման հարկադիր կատարման մասով կիրառելի իրավունք է Միջազգային հանրային իրավունքը և Ստացողի օրենսդրությունը՝ դրան չհակասող մասով:

ը) Միջնորդ դատավորները որոշումն ընդունում են ձայների մեծամասնությամբ, և նրանց կողմից ընդունված որոշումը վերջնական է և պարտադիր վեճի կողմերի համար:

թ) Եթե Միջնորդ դատավորների որոշումը չի կատարվում այն վեճի կողմերին հանձնելուց հետո երեսուն օրվա ընթացքում, վեճի յուրաքանչյուր կողմ իրավունք ունի.

- դիմելու դատական որոշման համար կամ երկրորդ կողմի նկատմամբ հարուցելու վարույթ՝ որոշման հարկադիր կատարման նպատակով, նման իրավասություն ունեցող ցանկացած դատարանում.

- հարկադիր կատարելու այդ որոշումը դատական հրամանով.

- երկրորդ մասնակցի նկատմամբ կիրառելու իրավական պաշտպանության այլ ընդունելի միջոցներ՝ արբիտրաժային որոշման և Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի դրույթների հարկադիր կատարման նպատակով:

ժ) Սույն բաժնի համաձայն որևէ վարույթի կամ սույն բաժնի համաձայն կայացրած որևէ որոշման հարկադիր կատարման նպատակով սկսված վարույթի ցանկացած ծանուցման կամ դատական փաստաթղթի հանձնումը պետք է կատարվի Ստանդարտ պայմանների 8.01-ին բաժնի համաձայն: Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի Կողմերը հրաժարվում են նման ծանուցման կամ դատական փաստաթղթի հանձնման այլ եղանակներից:

ՀՈԴՎԱԾ VII. Ուժի մեջ մտնելը: Գործողության դադարեցումը

ԲԱԺԻՆ 7.01. *Կառավարչի պարտավորությունների ուժի մեջ մտնելու պայմանները՝ համաձայն Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի*

Համաձայն Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի՝ Կառավարչի պարտավորություններն ուժի մեջ են մտնում միայն այն բանից հետո, երբ Կառավարիչն

ստանում է իր համար բավարար ապացույցներ հետևյալ պայմանների կատարման մասին.
ա) Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագիրը՝
- պատշաճ կերպով հաստատված կամ վավերացված է Ստացողի բոլոր իրավասու մարմինների կողմից՝ վերջինիս օրենսդրությամբ սահմանված կարգով.
- Ստացողի անունից ստորագրված է պատշաճ ձևակերպված լիազորություն ունեցող անձի կողմից.
- իրենից ներկայացնում է Ստացողի՝ վավերական և իրավաբանական ուժ ունեցող պարտավորություն, որը ենթակա է կատարման Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի պայմաններին համապատասխան:
բ) Կատարված է ցանկացած այլ պայման՝ վերապահված Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով՝ սույն բաժնի նպատակների համար:

Որպես ուժի մեջ մտնելու պայմանների կատարման հաստատում՝ Կառավարչին պետք է ներկայացվի իրավաբանի եզրակացություն, որն ընդունելի է վերջինիս համար կամ համաձայնեցված է նրա հետ, Կառավարչի համար բավարար՝ Ստացողի իրավասու մարմնի եզրակացություն, որը հաստատում է հետևյալը.
- Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատված կամ վավերացված է Ստացողի կողմից և իրավաբանորեն պարտադիր է նրա համար՝ սույն Համաձայնագրի պայմանների համաձայն:
- Կատարված է ցանկացած այլ պայման՝ վերապահված Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով, սույն բաժնի նպատակների համար:

ԲԱԺԻՆ 7.02. *Կառավարչի պարտավորությունների ուժի մեջ մտնելու ամսաթիվը Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով*

ա) Բացառությամբ Ստացողի և Կառավարչի միջև այլ պայմանավորվածությունների, Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի համաձայն՝ Կառավարչի պարտավորություններն ուժի մեջ են մտնում այն օրը, երբ Կառավարիչը ծանուցում է Ստացողին այն մասին, որ ինքն ընդունել է Ստանդարտ պայմանների 7.01-ին բաժնի համաձայն անհրաժեշտ ապացույցները (այսուհետ՝ Ուժի մեջ մտնելու ամսաթիվ):

բ) Եթե մինչև Ուժի մեջ մտնելու ամսաթիվը տեղի է ունեցել իրադարձություն, որի հիման վրա Կառավարիչը կարող էր կասեցնել Դրամաշնորհի միջոցների տրամադրման Ստացողի իրավունքը, եթե Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագիրն ուժի մեջ լիներ, Կառավարիչն իրավունք ունի հետաձգելու սույն բաժնի «ա» կետում նշված ծանուցման ուղարկումը մինչև այն պահը, երբ կդադարի նման իրադարձությունը (կամ իրադարձությունները) կամ իրավիճակը:

ԲԱԺԻՆ 7.03. *Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի գործողության դադարեցումը ուժի մեջ չմտնելու պատճառով*

Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի գործողությունը և Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի շրջանակներում Կողմերի բոլոր պարտավորությունների գործողությունը դադարեցվում են, եթե Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագիրն ուժի մեջ չի մտել՝ սույն բաժնի նպատակների համար Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով սահմանված ժամկետում (այսուհետ՝ Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետ)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Կառավարիչը, ուսումնասիրելով հետաձգման պատճառները, սահմանում է Ուժի մեջ մտնելու ավելի ուշ վերջնաժամկետ: Կառավարիչն անհապաղ ծանուցում է Ստացողին

Ուժի մեջ մտնելու ավելի ուշ վերջնաժամկետի մասին՝ համաձայն Ստանդարտ պայմանների 8.01-ին բաժնի և 8.04-րդ բաժնի «գ» կետի:

ԲԱԺԻՆ 7.04. *Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի գործողության դադարեցումը*

Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի գործողությունը և Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի շրջանակներում Կողմերի բոլոր պարտավորությունների գործողությունը անհապաղ դադարեցվում է բոլոր այդպիսի պարտավորությունների լրիվ կատարումից հետո:

ՀՈԴՎԱԾ VIII. Այլ դրույթներ

ԲԱԺԻՆ 8.01. *Ծանուցումներ և հարցումներ*

Ցանկացած ծանուցում կամ հարցում, որը պետք է կամ կարող է ուղարկվել Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի համաձայն կամ դրա կապակցությամբ, ձևակերպվում է գրավոր: Նման ծանուցումը կամ հարցումը համարվում է պատշաճ կերպով ուղարկված, եթե առաքված է սուրհանդակի միջոցով կամ փոստով, տելեքսով կամ ֆաքսով, (կամ՝ եթե թույլատվում է Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրով, կապի էլեկտրոնային միջոցների օգնությամբ), այն կողմին, որին դա պետք է կամ կարող է ուղարկվել տվյալ կողմի հասցեով, որը նշված է Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրում, կամ այլ հասցեով, որի մասին այդ կողմը հայտնել է ծանուցում ուղարկող կամ հարցում կատարող կողմին: Առաքումը ֆաքսով հաստատվում է նաև փոստային առաքմամբ:

ԲԱԺԻՆ 8.02. *Գործողություններ Ստացողի անունից*

ա) Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի շրջանակներում Ստացողի կողմից նշանակված ներկայացուցիչը կամ ցանկացած այլ անձ՝ տվյալ ներկայացուցչի կողմից նշված նպատակներով պատշաճ կերպով գրավոր լիազորված, կարող է կատարել ցանկացած գործողություն, որի կատարումն անհրաժեշտ է կամ թույլատրված է Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրին համապատասխան, և ձևակերպել ցանկացած փաստաթուղթ, որի ձևակերպումն անհրաժեշտ է կամ թույլատրված է նման Համաձայնագրով Ստացողի անունից:

բ) Ստացողի կողմից նշանակված նեկայացուցիչը կամ ներկայացուցչի կողմից լիազորված անձը կարող է Ստացողի անունից համաձայնեցնել Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի ցանկացած փոփոխություն՝ գրավոր փաստաթղթի հիման վրա, որը ձևակերպված է Ներկայացուցչի կամ լիազորված անձի կողմից, այն պայմանով, որ, նման ներկայացուցչի կարծիքով, այդ փոփոխությունը տվյալ պայմաններում հիմնավորված է և Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի շրջանակներում չի հանգեցնի Ստացողի պարտավորությունների ավելացման:

ԲԱԺԻՆ 8.03. *Ստացողի նեկայացուցչի իրավասությունների հաստատում*

Ստացողը Կառավարչին ներկայացնում է.

ա) այն անձի կամ անձանց իրավասությունների մասին բավարար ապացույցներ, որոնք Ստացողի անունից կատարելու են ցանկացած գործողություն կամ ձևակերպելու են ցանկացած փաստաթուղթ, որոնց կատարումը կամ ձևակերպումը նա պահանջում է

կամ թույլատրում է Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրին համապատասխան, որի կողմ նա հանդիսանում է.

բ) Ստացողի ներկայացուցչի կողմից լիազորված անձանց ստորագրությունների նմուշները՝ Ստանդարտ պայմանների 8.02-րդ բաժնի համաձայն, որոնք հաստատված են Ստացողի լիազորված ներկայացուցչի կողմից:

ԲԱԺԻՆ 8.04. *Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի ձևակերպումը*

ա) Դրամաշնորհի տրամադրման մասին յուրաքանչյուր Համաձայնագիր կազմվում է ռուսերեն և կարող է ձևակերպվել մի քանի օրինակով, որոնց քանակը նշվում է Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրում, որոնցից յուրաքանչյուրը համարվում է բնօրինակ:

բ) Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են գրավոր և ստորագրվում են Կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից, ուժի մեջ են մտնում Համաձայնագրի համար սահմանված կարգով և ուժի մեջ մտնելուց հետո կազմում են դրա անբաժանելի մասը:

գ) Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի փոփոխությունները և լրացումները, որոնք կատարվում են Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի և սույն Ստանդարտ պայմանների համաձայն ծանուցում ուղարկելու միջոցով, կատարվում են միակողմանի և չեն պահանջում մյուս կողմի լիազոր ներկայացուցչի ստորագրություն և սույն բաժնի «բ» կետի պահանջներին համապատասխան ձևակերպում: Նման փոփոխությունները և լրացումները կազմում են Դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի անբաժանելի մասը:

<u>Հավելված հմ. 2</u>

Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև 2018թ. ապրիլի 3-ին կնքված՝ Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի

Դրամաշնորհի պայմանները

Դրամաշնորհի արժույթը	ԱՄՆ դոլար
Դրամաշնորհի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթիվը	2021 թվականի մարտի 31 կամ այլ ավելի ուշ ժամկետ, որը Կառավարիչը կարող է սահմանել՝ Ստանդարտ պայմանների 1.03-րդ բաժնի «զ» կետի դրույթների համաձայն
Համաձայնագրի շրջանակներում կիրառվող կանոնները և ընթացակարգերը	- Հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող նախագծերի՝ գնումների քաղաքականությունը (հաստատված է Հիմնադրամի խորհրդի՝ 2013 թ. հուլիսի 10-ի որոշմամբ, արձանագրություն հմ. 11) հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով (այսուհետ՝ **«Հիմնադրամի գնումների Քաղաքականություն»**). - Վերակառուցման և զարգացման Միջազգային բանկի (ՎԶՄԲ)՝ 2011 թվականի հունվարի՝ «Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ փոխառություններով և ԶՄԱ վարկերով ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներ» ուղեցույց, (Guidelines: Procurment of Goods, Works and Non-consulting Services under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011) (այսուհետ՝ **«ՎԶՄԲ ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների ուղեցույց»**). - Վերակառուցման և զարգացման Միջազգային բանկի (ՎԶՄԲ)՝ 2011 թվականի հունվարի «Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ փոխառություններով և ԶՄԱ վարկերով խորհրդատուների ընտրություն և վարձակալություն» ուղեցույց, (Guidelines: Selection and employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011) (այսուհետ՝ **«ՎԶՄԲ խորհրդատուների ընտրության և վարձակալության ուղեցույց»**). - Համաշխարհային բանկի հաճախորդներին միջոցների տրամադրման՝ 2006 թվականի մայիսի տեղեկատու (Disbursement Handbook for World Bank Clients, May 2006,)՝ հետագա փոփոխություններով և լրացումներով. - Համաշխարհային բանկի Ծրագրերի իրականացման համար միջոցների տրամադրման՝ 2006 թ. մայիսի 1-ի ուղեցույց (World Bank Disbursement Gudelines for Projects dated May 1, 2006)՝ հետագա փոփոխություններով և լրացումներով. - Եվրասիական զարգացման բանկի բնապահպանական և

	սոցիալական պատասխանատվության քաղաքականություն (հաստատված Հիմնադրամի Կառավարման՝ 2012 թ. ապրիլի 26-ի որոշմամբ, արձանագրություն հմ. 188)

Կառավարիչ՝

_____

Ա. Յու. Բելյանինով
Եվրասիական զարգացման բանկի կողմից

Ստացող՝

_____

Վ.Ս. Արամյան
Հայաստանի Հանրապետության կողմից

Հավելված հմ. 3

Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև 2018թ. ապրիլի 3-ին կնքված՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և ծախսերի տեսակները

Ծախսերի տեսակները	**Հատկացված գումարը (ԱՄՆ դոլար)**	**Ծախսերի տեսակների ֆինանսավորման մասնաբաժինը**
Դրամաշնորհ		
1) Միջոցառումների ֆինանսավորում՝ Ծրագրի 1 (բ) մասով ԱԲՕ հաստատությունների կողմից անցկացվող՝ կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգի գծով	329 475,00 (երեք հարյուր քսանինը հազար չորս հարյուր յոթանասունհինգ)	100% առանց հարկերի
2) Ծրագրի ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ՝ համաձայն Գնումների պլանի	592 000,00 (հինգ հարյուր իննսուներկու հազար)	100% առանց հարկերի
3)Գործառնական ծախսեր*	78 525 (յոթանասունութ հազար հինգ հարյուր քսանհինգ)	100% առանց հարկերի
Ստացողի Բյուջե		
Հարկերի և այլ պարտադիր վճարների վճարում Դրամաշնորհի միջոցներից ֆինանսավորվող ծախսերի գծով	ոչ պակաս, քան 166 631 (հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր երեսունմեկ)	100%
Ընդամենը Ծրագրի արժեքը	1 166 631 (մեկ միլիոն հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր երեսունմեկ)	-

* Համաձայնագրի նպատակների համար Գործառնական ծախսերի անվան տակ հասկացվում են ԾԻԽ-ի ծախսերը Ծրագրի իրականացման գծով, այդ թվում՝ աշխատակիցների աշխատավարձը, գրասենյակի պահպանումը, տրանսպորտային միջոցների շահագործման և տեխնիկական սպասարկման ծախսերը, կոմունալ ծախսերը, հաղորդակցման ծախսերը, տեղեկատվական համակարգերի և սարքավորումների պահպանման ծախսերը, շահագործման ծախսերը, թարգմանչական ծախսերը, փոստային ծախսերը, գործուղումների ծախսերը, տպագրական ծախսերը և այլ խելամիտ ծախսեր, որոնք անմիջականորեն կապված են Ծրագրի միջոցառումների իրականացման հետ՝ Կառավարչի հետ համաձայնեցված Գործառնական ծախսերի բյուջեին համապատասխան:

Կառավարիչ՝	**Ստացող՝**
_____	_____
Ա. Յու. Բելյանինով Եվրասիական զարգացման բանկի կողմից	Վ.Ս. Արամյան Հայաստանի Հանրապետության կողմից

Հավելված հմ. 4

Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև 2018թ. ապրիլի 3-ին կնքված՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի

Ծրագրի նկարագրությունը և իրականացման կարգը

1. Ոլորտը՝ առողջապահություն:

2. Ծրագրի նպատակն է բժշկական օգնություն տրամադրող պետական և մունիցիպալ հաստատություններում (այսուհետ՝ Բժշկական հաստատություններ) հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և ոչ վարակիչ հիվանդությունների (այսուհետ՝ ՈՎՀ) բուժման մեթոդների կատարելագործումը:

3. Ծրագիրը բաղկացած է չորս մասից և պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության երեք շրջանում՝ Լոռու, Սյունիքի և Տավուշի մարզերում:

Մաս 1. Առողջապահության առաջնային օղակում ՈՎՀ-ների կանխարգելումն և վերահսկումը

ա) Բժշկական հաստատությունների՝ կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշման ուղղությամբ ինստիտուցիոնալ ներուժի զարգացում, այդ թվում՝

- բժշկական հաստատությունների բժշկական անձնակազմի վերապատրաստում (անհատույց), որը Ծրագրի շրջանակներում ներգրավված է կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգային հետազոտություններում.
- «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը (կամ վերջինիս իրավահաջորդին) անհատույց փոխանցման համար մամոգրաֆիայի շարժական սարքի ձեռքբերում՝ Ծրագրի մաս 1 (բ) կետով նախատեսված՝ սքրինինգի ծրագրի իրականացման նպատակով Առաջին բժշկական օգնություն տրամադրող բժշկական հաստատություններին (այսուհետ՝ ԱԲՕ հաստատություններ) անհատույց տրամադրման պայմանով.

- Ծրագրի իրականացման ընթացքում մամոգրաֆիայի շարժական սարքի տեխնիկական սպասարկում:

բ) ԱԲՕ հաստատությունների ֆինանսավորում, այդ թվում՝

- ԱԲՕ հաստատությունների կողմից իրականացվող՝ կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգի մասով փաստացի կատարված բժշկական հետազոտության տվյալների հիման վրա միջոցառումների ֆինանսավորում.
- համակարգչային սարքավորումների ձեռքբերում՝ սքրինինգի անցկացման համար սահմանված նպատակային գործողությունների իրականացման պայմանով ԱԲՕ հաստատություններին անհատույց փոխանցման նպատակով:

Մաս 2. Առողջ ապրելակերպի, հիմնական ՈՎՀ ռիսկային գործոնների կանխարգելման, դիետաների, ֆիզիկական ակտիվության, ծխախոտի օգտագործման վտանգների մասին հասարակության իրազեկվածության բարձրացում:

Մաս 3. Շարունակական բժշկական կրթություն ինտերնետ-մոդուլի մշակում՝ ներառյալ ՈՎՀ դասընթացների շեշտադրմամբ ընտանեկան բժշկության բժիշկների հավաստագրման ծրագրերը՝ ԱԲՕ հաստատությունների մասնագետների ուսուցումը կազմակերպելու և անցկացնելու նպատակով «Ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի անվան Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության

Առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց փոխանցման համար (կամ՝ վերջինիս իրավահաջորդին):

Մաս 4. Ծրագրի կառավարում՝ ԾԻԽ-ի գործունեության ապահովման և աուդիտի հետ կապված ծախսեր:

4. Ստացողն ապահովում է Ծրագրի իրականացումը և Համաձայնագրի պայմանների կատարումը գործադիր իշխանության իր մարմինների և կազմակերպությունների միջոցով՝ նրանց վրա դնելով Համաձայնագրի պայմանների կատարման պատասխանատվությունը՝ համաձայն Ստացողի օրենսդրությամբ սահմանված կարգի, այդ թվում.

4.1. ՀՀ առողջապահության նախարարությունը (կամ նրա իրավահաջորդը)՝

ա) պատասխանատու է ԾԻԽ-ի աջակցությամբ Ծրագրի իրականացման համար,

բ) Ծրագրի 1 (ա) և 3-րդ մասերով իրականացնում է սարքավորումների և ծրագրային ապահովման փոխանցումը շահառուներին,

գ) Ծրագրի 1 (բ) կետի համաձայն կնքում է (ԾԻԽ-ի հետ համատեղ) համաձայնագրեր ԱԲՕ հաստատությունների հետ ֆինանսական և տեխնիկական աջակցության տրամադրման վերաբերյալ (այսուհետ՝ **ԱԲՕ հաստատությունների ֆինանսավորման մասին համաձայնագրեր**) և վերոնշյալ համաձայնագրերի պայմանների համաձայն իրականացնում է համակարգչային տեխնիկայի փոխանցում ԱԲՕ հաստատություններին:

4.2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գործակալություն» պետական հիմնարկը (կամ նրա իրավահաջորդը) աջակցություն է ցուցաբերում ՀՀ առողջապահության նախարարությանը Ծրագրի իրականացման մասով, ներառյալ՝ աշխատանքների ամենօրյա կազմակերպում, ֆինանսների, գնումների կառավարում, հաշվառման վարում, Դրամաշնորհի միջոցների նպատակային օգտագործում, մշտադիտարկում և Ծրագրի արդյունավետության գնահատում, Ծրագրով նախատեսված՝ ֆինանսական և այլ հաշվետվությունների կազմում և ներկայացում Կառավարչին, արտաքին աուդիտորների ներգրավում, Համաձայնագրի պահանջներին համապատասխան կիրառվող քաղաքականության և ընթացակարգերի կատարում, ԱԲՕ հաստատությունների ֆինանսավորման համաձայնագրերի պայմաններին համապատասխան՝ Հատուկ հաշվի միջոցով ԱԲՕ հաստատություններին ֆինանսավորման փոխանցում:

4.3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը (կամ նրա իրավահաջորդը) պատասխանատու է Հայաստանի Հանրապետության բյուջեից Ծրագրի ժամանակին համաֆինանսավորման, ԾԻԽ-ի անունով Հատուկ հաշվեհամարի բացման և վարման, ինչպես նաև Համաձայնագրի պայմաններին համապատասխան նշված հաշվի հատուկ կարգավիճակի պահպանման ապահովման համար:

5. Ծրագրի իրականացումը նախատեսվում է ավարտել 2021 թ. մարտի 31-ին: Նշված ժամկետի փոփոխությունը կարող է Կառավարչի կողմից համաձայնեցվել՝ Ստացողի գրավոր դիմումի հիման վրա՝ Ստացողին Կառավարչի կողմից գրավոր ծանուցում ուղարկվելու միջոցով, և ուժի մեջ է մտնում նշված ծանուցման ամսաթվից:

Կառավարիչ՝	**Ստացող՝**
_____	_____
Ա. Յու. Բելյանինով Եվրասիական զարգացման բանկի կողմից	Վ.Ս. Արամյան Հայաստանի Հանրապետության կողմից

Հավելված հմ. 5

Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև 2018թ. ապրիլի 3-ին կնքված՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի

Ծրագրի մշտադիտարկում և գնահատում

1. Ստացողը մշտապես պետք է իրականացնի Ծրագրի կատարման և դրա նպատակների իրականացման մշտադիտարկում և գնահատում՝ համաձայն մշտադիտարկման հետևյալ ցուցանիշների.

Հմ.	Ցուցանիշ	Չափման միավոր
1.	Ծրագրի իրականացման սկզբից ՀՀ Տավուշի, Սյունիքի և Լոռու մարզերում մեկ անգամից ոչ պակաս՝ կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգ անցած 50-69 տարեկան կանանց տոկոսը	%
2.	Ծրագրի շրջանակներում ներդրված անընդմեջ բժշկական կրթության ինտերնետ-մոդուլի օգնությամբ ՈՎՀ դասընթացներն անցած բուժաշխատողների տոկոսը	%

2. Ստացողը պետք է նախապատրաստի և Կառավարչին ներկայացնի հաշվետվություններ՝ ամփոփելով Ծրագրի մշտադիտարկման արդյունքները, որոնք ձևով և բովանդակությամբ բավարար կլինեն Կառավարչի համար, ներառյալ՝

2.1. Եռամսյակային՝

ա) Հաշվետվություններ Ծրագրի իրականացման ընթացքի մասին հաշվետու ժամանակահատվածի համար և աճողական արդյունքով՝ բացատրելով Ծրագրի միջոցառումների իրականացման փաստացի և ծրագրված ժամկետների միջև տարբերությունները, և Ծրագրի արդյունավետ իրականացման և նպատակներին հասնելու ապահովման նպատակով հաջորդող ժամանակահատվածում առաջարկվող միջոցների շարադրմամբ,

բ) Հաշվետու ժամանակահատվածում և աճողական արդյունքով Ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների արժեքներին հասնելու առաջընթացի մասին հաշվետվություններ՝ Ծրագրի արդյունավետ իրականացման և նպատակներին հասնելու ապահովման նպատակով հաջորդող ժամանակահատվածում առաջարկվող միջոցների շարադրմամբ,

գ) Ծրագրով Գնումների պլանի կատարման վերաբերյալ հաշվետվություններ աճողական արդյունքով հաշվետու ժամանակահատվածի ավարտի դրությամբ՝ բացատրելով կատարման փաստացի և պլանավորված ցուցանիշների միջև տարբերությունը,

դ) Միջանկյալ արդյունքների ցուցանիշներ.

- միջոցների օգտագործման և աղբյուրների մասին հաշվետվություն.
- ըստ Ծրագրի՝ միջոցառումների միջոցների օգտագործման հաշվետվություն.
- Հատուկ հաշվեհամարից քաղվածք.

- ֆինանսական դրության մասին հաշվետվություն.
- Հատուկ հաշվեհամարի հավասարակշռված հաշվեկշիռ.
- Ծախսային ամփոփագիր:

ե) Հաշվառման փաստաթղթեր՝

- Ըստ ծախսերի առաջին տեսակի՝ ԱԲՕ հաստատությունների ֆինանսավորման մասին համաձայնագիր և ԱԲՕ հաստատությունների կողմից իրականացման ենթակա միջոցառումները հաստատող փաստաթղթեր, որոնք ենթակա են Դրամաշնորհի միջոցներից վճարման և ձևակերպված են ԱԲՕ հաստատությունների ֆինանսավորման մասին համաձայնագրի պահանջներին համապատասխան (այսուհետ՝ Արձանագրություններ):
- Ըստ ծախսերի երկրորդ և երրորդ տեսակների՝ առաջնային հաշվառման փաստաթղթերը (ապրանքների և ծառայությունների մատակարարների հետ պայմանագրեր, հաշիվ-ապրանքագրեր, արձանագրություններ, ամփոփագրեր, վճարումների ռեեստրներ և այլն), որոնք հաստատում են Ընդունելի ծախսերը 30.000,0 (երեսուն հազար) ԱՄՆ դոլարից ավել գումարի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման պայմանագրերով:

Այդպիսի առաջին հաշվետվությունները, որոնք նշված են «ա»-«ե» ենթակետերում, պետք է Կառավարչին ներկայացվեն ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին օրացուցային կիսամյակի ավարտից ոչ ուշ, քան 30 (երեսուն) օրացուցային օր հետո: Հետագայում նշված հաշվետվությունները պետք է Կառավարչին ներկայացվեն ոչ ուշ, քան Ծրագրի իրականացման ողջ ընթացքում՝ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտին հաջորդող 30 (երեսուն) օրացուցային օր հետո: Վերջին հաշվետվությունները Կառավարչին պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան հասանելիության ժամկետի ավարտի ամսաթվին հաջորդող 30 (երեսուն) օրացուցային օր հետո:

2.2. Ծրագրի ավարտին.

- Ծրագրի ավարտի մասին վերջնական հաշվետվությունը ներկայացվում է Ստանդարտ պայմանների 3.03-րդ բաժնի «դ» ենթակետի դրույթների համաձայն:

3. Ստացողը Կառավարչի հետ պետք է քննարկի վերոնշյալ հաշվետվությունները և հետագայում ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները Ծրագրի արդյունավետ ավարտման և դրա նպատակներին հասնելու համար՝ հաշվի առնելով վերը նշված հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունները և խորհրդակցությունները, ինչպես նաև տվյալ հարցի շուրջ Կառավարչի կարծիքը:

ԿԱՌԱՎԱՐԻՉ՝	ՍՏԱՑՈՂ՝
_____	_____
Ա. Յու. Բելյանինով Եվրասիական զարգացման բանկի կողմից	Վ.Ս. Արամյան Հայաստանի Հանրապետության կողմից

Հավելված հմ. 6
Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև 2018թ. ապրիլի 3-ին կնքված՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի

Գնումների ընթացակարգեր

1. Ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներ:

Ստացողն իրականացնում է ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումները Դրամաշնորհի միջոցների հաշվին՝ համաձայն Հիմնադրամի գնումների Քաղաքականության (Հիմնադրամի գնումների Քաղաքականության 4.4-րդ կետի «ժ» ենթակետը չի կիրառվում) և ՎԶՄԲ ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների ուղեցույցի այն մասով, որը չի հակասում Հիմնադրամի գնումների Քաղաքականությանը և Գնումների պլանին:

Գնումների կիրառելի մեթոդներն են.

1.1. Միջազգային մրցութային սակարկումները: Պետք է Ստացողի կողմից իրականացվեն ՎԶՄԲ ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների ուղեցույցի 2-րդ բաժնի՝ «Միջազգային մրցութային սակարկումներ» դրույթներին համապատասխան՝ պայմանագրերի կնքման համար, եթե վերջինս նախատեսված է Գնումների պլանով:

Այլ դեպքերում կիրառվում են՝

1.2. Ազգային մրցութային սակարկումներ: Պետք է Ստացողի կողմից իրականացվեն ՎԶՄԲ ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների ուղեցույցի 3.3-3.4-րդ՝ «Տեղական մրցութային սակարկումներ» բաժիններին համապատասխան՝ հետևյալ պայմանագրերի կնքման համար.

ա) այն ապրանքների գնման նպատակով, որոնց արժեքը, ներառյալ հարկերը, կազմում է 100.000 (հարյուր հազար) ԱՄՆ դոլարից մինչև 1.000.000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար՝ ներառյալ,

բ) այն աշխատանքների համար, որոնց արժեքը, ներառյալ հարկերը, կազմում է 200.000 (երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլարից մինչև 5.000.000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար՝ ներառյալ:

1.3. Գնումներ ազատ առևտրում: Պետք է Ստացողի կողմից անցկացվեն ՎԶՄԲ ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների ուղեցույցի 3.5-րդ՝ «Գնումներ ազատ առևտրում» բաժնի դրույթներին համապատասխան՝ հետևյալ պայմանագրերի կնքման համար.

ա) այն ապրանքների գնման նպատակով, որոնց արժեքը, ներառյալ հարկերը, 100.000 (հարյուր հազար) ԱՄՆ դոլարից պակաս է,

բ) այն աշխատանքների համար, որոնց արժեքը, ներառյալ հարկերը, 200.000 (երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլարից պակաս է:

2. Խորհրդատվական ծառայությունների գնումներ

Ստացողն իրականացնում է խորհրդատվական ծառայությունների գնումները Դրամաշնորհի միջոցների հաշվին Հիմնադրամի գնումների Քաղաքականության (Հիմնադրամի գնումների Քաղաքականության 4.4-րդ կետի «ժ» ենթակետը չի

կիրառվում) և ՎՀՄԲ խորհրդատուների ընտրության և վարձակալության ուղեցույցի այն մասով, որը չի հակասում Հիմնադրամի գնումների Քաղաքականությանը և Գնումների պլանին: Գնումների իրականացման նպատակով Ստացողն օգտագործում է ՎՀՄԲ տիպային մրցութային փաստաթղթերը:

Գնման բնույթից ելնելով՝ գնումների կիրառելի մեթոդներն են.

2.1. ՎՀՄԲ խորհրդատուների ընտրության և վարձակալության ուղեցույցի 2.1-2.35-րդ բաժինների դրույթներին համապատասխան՝ որակի և արժեքի հիմքով ընտրությունը,

2.2. ՎՀՄԲ խորհրդատուների ընտրության և վարձակալության ուղեցույցի 3.2-3.4-րդ բաժինների դրույթներին համապատասխան՝ որակի հիմքով ընտրությունը,

2.3. ՎՀՄԲ խորհրդատուների ընտրության և վարձման ուղեցույցի 3.5-րդ բաժնի դրույթներին համապատասխան՝ ֆիքսված բյուջեի պայմաններում ընտրությունը,

2.4. ՎՀՄԲ խորհրդատուների ընտրության և վարձակալության ուղեցույցի 3.6-րդ բաժնի դրույթներին համապատասխան՝ նվազագույն արժեքի հիմքով ընտրությունը,

2.5. ՎՀՄԲ խորհրդատուների ընտրության և վարձակալության ուղեցույցի 3.7-րդ բաժնի դրույթներին համապատասխան՝ որակավորման հիմքով ընտրությունը,

2.6. ՎՀՄԲ խորհրդատուների ընտրության և վարձակալության ուղեցույցի 3.8-3.11-րդ բաժինների դրույթներին համապատասխան՝ արտամրցութային ընտրությունը,

2.7. ՎՀՄԲ խորհրդատուների ընտրության և վարձակալության ուղեցույցի 5.2-5.4-րդ բաժինների դրույթներին համապատասխան՝ անհատական խորհրդատուների ընտրությունը,

2.8. Կիրառելի մեթոդը որոշվում է Գնումների պլանին համապատասխան:

3. Կիրառելի մրցութային տիպային փաստաթղթեր – ՎՀՄԲ մրցութային տիպային փաստաթղթեր:

4. Ծրագրով գնումների իրականացման վերահսկողության նպատակով Կառավարիչն օգտագործում է նախնական քննության ընթացակարգերը այն պայմանագրերի գծով, որոնք համապատասխանում են հետևյալ աղյուսակում ներկայացված չափորոշիչներին.

Ծախսերի տեսակը	**Գնումների մեթոդը**	**Ենթակա են նախնական քննարկման**
Ապրանքներ	Միջազգային մրցութային սակարկումներ	Բոլոր պայմանագրերը
	Տեղական մրցութային սակարկումներ	Առաջին երկու պայմանագրերը՝ անկախ իրենց արժեքից
	Գնումներ ազատ առևտրում	Առաջին երկու պայմանագրերը՝ անկախ իրենց արժեքից
Աշխատանքներ	Միջազգային մրցութային սակարկումներ	Բոլոր պայմանագրերը
	Տեղական մրցութային սակարկումներ	Առաջին երկու պայմանագրերը՝ անկախ իրենց արժեքից
	Գնումներ ազատ առևտրում	Առաջին երկու պայմանագրերը՝ անկախ իրենց արժեքից
Խորհրդատվական ծառայություններ	Որակի հիմքով ընտրություն Ֆիքսված բյուջեի պայմաններում ընտրություն, Ըստ նվազագույն արժեքի	100.000 (հարյուր հազար) ԱՄՆ դոլարից ոչ պակաս պայմանագրերը և առաջին պայմանագիրը (նշված մեթոդներից յուրաքանչյուրով)՝

	ընտրություն,	անկախ իր արժեքից
	Խորհրդատուի որակավորման հիմքով ընտրություն	200.000 (երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլարից ոչ պակաս պայմանագրերը և առաջին պայմանագիրը՝ անկախ իր արժեքից
	Արտամրցութային ընտրություն	Բոլոր պայմանագրերը
	Անհատական խորհրդատուների ընտրություն	50.000 (հիսուն հազար) ԱՄՆ դոլարից ոչ պակաս պայմանագրերը

Անկախ աղյուսակում սահմանված չափորոշիչներից (շեմերից)՝ Կառավարիչը կարող է որոշում ընդունել կոնկրետ գնումների նախնական քննարկման մասին, և Ստացողը պարտավոր է Կառավարչին ապահովել այդպիսի նախնական քննարկման հնարավորություն:

Այն պայմանագրերը, որոնց համար նախատեսված չէ նախնական քննարկման ընթացակարգ, ենթակա են հետագա քննարկման անցած ժամանակահատվածի համար գնումների և կնքված պայմանագրերի գծով փաստաթղթային ստուգումների և Հիմնադրամի գնումների Քաղաքականության համաձայն գնումների աուդիտի ընթացքում:

5. Կառավարիչն իրավասու է Հիմնադրամի գնումների Քաղաքականությամբ, Ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների ուղեցույցով և Խորհրդատուների ընտրության և վարձակալության ուղեցույցով նախատեսված պատժամիջոցներ կիրառել Ստացողի կողմից դրանցում նշված խախտումներ թույլ տրվելու պարագայում:

6. Սույն հավելվածով նախատեսված շեմային արժեքների փոփոխությունը կարող է համաձայնեցվել Կառավարչի կողմից՝ Ստացողի գրավոր դիմումի հիման վրա, Ստացողին Կառավարչի կողմից գրավոր ծանուցում ուղարկվելու միջոցով, Ստանդարտ պայմանների 8.01-ին բաժնի և 8.04-րդ բաժնի «գ» կետին համաձայն, և ուժի մեջ է մտնում նշված ծանուցման ամսաթվից:

ԿԱՌԱՎԱՐԻՉ՝

_____

Ա. Յու. Բելյանինով
Եվրասիական զարգացման բանկի կողմից

ՍՏԱՑՈՂ՝

_____

Վ.Ս. Արամյան
Հայաստանի Հանրապետության կողմից

Հավելված հմ. 7
Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև 2018թ. ապրիլի 3-ին կնքված՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից դրամաշնորհի տրամադրման մասին Համաձայնագրի

Միջոցների տրամադրման ընթացակարգերը

1. Միջոցների տրամադրման ընթացակարգերի հարցերում Ստացողը և Կառավարիչը Համաձայնագրին չհակասող մասով կիրառում են հետևյալ փաստաթղթերի ձևերն ու դրույթները.
- Համաշխարհային բանկի հաճախորդներին միջոցների տրամադրման տեղեկագիր՝ հետագա լրացումներով և փոփոխություններով, մայիս, 2006 թ. (Disbursement Handbook for World Bank clients, May 2006),
- Ծրագրերի իրականացման համար Համաշխարհային բանկի կողմից միջոցների տրամադրման ուղեցույց, 1-ը մայիսի, 2006 թվական, հետագա լրացումներով և փոփոխություններով (World Bank Disbursement Guidelines for Projects, dated May 1, 2006):

Կառավարիչն իրավասու է նշված փաստաթղթերով նախատեսված միջոցները կիրառել, եթե Ստացողի կողմից թույլ են տրվել դրանցում նշված խախտումներ:

Կառավարիչն Ստացողին կարող է ծանուցել տվյալ փաստաթղթերի առավել թարմ, արդիական խմբագրությունների կիրառման անհրաժեշտության մասին:

2. Ստացողին Դրամաշնորհի միջոցների տրամադրումն իրականացվում է.

2.1 Դրամաշնորհի միջոցների հաշվին վճարման ենթակա՝ Ստացողի ակնկալվող ծախսերի ավանսավորման մեթոդով՝ Դրամաշնորհի միջոցները Հատուկ հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

2.2 Դրամաշնորհի միջոցներից վճարման ենթակա պայմանագրերի գծով մատակարարներին ուղղակի վճարումների միջոցով (ըստ ծախսերի 2-րդ տեսակի):

3. Դրամաշնորհի առավելագույն գումարը, որը կարող է լինել Հատուկ հաշվեհամարին (այսուհետ՝ **Առավելագույն մնացորդ**), կազմում է 150 000,00 (հարյուր հիսուն հազար) ԱՄՆ դոլար:

Հատուկ հաշվին միջոցների տրամադրման Հայտի առավելագույն գումարը հաշվարկվում է որպես Առավելագույն մնացորդի և Ստացողի կողմից փաստաթղթով չհաստատված՝ նախկինում հատուկ հաշվին փոխանցված գումարի տարբերություն:

4. Որպես միջոցների տրամադրման մասով համապատասխան Հայտի նպատակային օգտագործման միջոցների հիմնավորվածությունը հաստատող փաստաթղթեր, որոնք պետք է ներկայացվեն Ստացողի կողմից, հանդիսանում են.

4.1. Ավանսավորման մեթոդով միջոցների տրամադրման Հայտերի համար (Հատուկ հաշվեհամարի համալրման համար)՝ Համաձայնագրի 5-րդ Հավելվածի 2.1-ին կետի «դ» և «ե» ենթակետերի համաձայն փաստաթղթեր, որոնք տրամադրվում են Ստացողի կողմից կա՛մ Հատուկ հաշվեհամարին միջոցների տրամադրման Հայտի կազմում, կա՛մ նախապես Ծրագրի ֆինանսական մշտադիտարկման հաշվետվության կազմում, որոնք տրամադրվում են Ստացողի կողմից՝ Համաձայնագրի 5-րդ Հավելվածի 2.1-ին կետի համաձայն.

4.2. Ուղղակի վճարման մեթոդով միջոցների տրամադրման հայտերի համար՝ առաջնային հաշվառման փաստաթղթերը (ապրանքների և ծառայությունների մատակարարների հետ պայմանագրեր, հաշիվ-ապրանքագրեր, արձանագրություններ, ամփոփագրեր, վճարումների ռեեստրներ և այլն), որոնք հաստատում են Ընդունելի

ծախսերը, և այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնք կարող են հիմնավորված կերպով պահանջվել Կառավարչի կողմից:

Միջոցների տրամադրման Հայտի կազմում ներառված փաստաթղթերի ցանկը կարող է փոփոխվել Կառավարչի հետ համաձայնությամբ, Ստացողի գրավոր դիմումի հիման վրա՝ Կառավարչի կողմից Ստացողին ծանուցում ուղարկելու միջոցով՝ համաձայն Ստանդարտ պայմանների 8.01-ին բաժնի և 8.04-րդ բաժնի «գ» կետի, և ուժի մեջ է մտնում նշված ծանուցման ամսաթվից:

5. Ստացողը պարտավոր է Կառավարչին վերադարձնել Հատուկ հաշվեհամարին ավանսավորված Դրամաշնորհի միջոցները, որոնց նպատակային օգտագործումը Դրամաշնորհի հասանելիության ժամանակահատվածի Ամսաթվի ավարտից հետո՝ 4 (չորս) ամսվա ընթացքում, Ստացողի կողմից փաստաթղթով չի հաստատվում:

6. Միջոցների տրամադրման հայտի նվազագույն գումարը կազմում է 40 000,00 (քառասուն հազար) ԱՄՆ դոլար:

7. Ուղղակի վճարման մեթոդով Միջոցների տրամադրման հայտը պետք է նախատեսի մեկ պայմանադիր կողմին վճարում:

ԿԱՌԱՎԱՐԻՉ՝	**ՍՏԱՑՈՂ՝**
Ա. Յու. Բելյանինով	Վ.Ս. Արամյան
Եվրասիական զարգացման բանկի կողմից	Հայաստանի Հանրապետության կողմից